

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԶԳԱՅԻՆ ԱԿԱԴԵՄԻԱ
ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏ

ԻՈԱՆՆԻՍ Կ. ԽԱՍԻՈՏԻՍ

ՊԱՏՄԱԿԱՆ ԱՎԱՆԴՈՒՅԹ ԵՎ ՔԱՂԱՔԱԿԱՆ
ԻՐԱՊԱՇՏՈՒԹՅՈՒՆ.
ՀՈՒՆԱԿԱՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ
ՀԱՅԿԱԿԱՆ ՀԱՐՑԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ
(1876-1996)

ԵՐԵՎԱՆ 2012

2165024

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԶԳԱՅԻՆ ԱԿԱԴԵՄԻԱ
ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ԻՆՏԻՏՈՒՏ

ԻՈՒՆՆԻՍ Կ. ԽԱՍԻՈՏԻՍ
ՍԱՆՈՆԻԿԻ ԱՐԻՍՏՈՏԵԼԻ ԱՆՎԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ
ՀՈՒՆԱՍԱՆ

A/103328

ՊԱՏՄԱԿԱՆ ԱՎԱՆԴՈՒՅԹ ԵՎ ՔԱՂԱՔԱԿԱՆ
ԻՐԱՊԱՇՏՈՒԹՅՈՒՆ.
ՀՈՒՆԱԿԱՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ
ՀԱՅԿԱԿԱՆ ՀԱՐՑԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ
(1876-1996)

Հունարեն բնագրից թարգմանեց
ակադեմիկոս Հ. Մ. Բարթիկյանը


ՄԵՏՐՈՊ ՍՐՔ. ԱՇԾԵԱՆ
ՍԱՏԵՆԱՇՐ
81



ARCH. MESROB ASHJIAN
BOOK SERIES
81

Mesrob Ashjian

ԵՐԵՎԱՆ
ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ԻՆՏԻՏՈՒՏ
2012



ՀՏԴ 327
ԳՄԴ 66.4
Խ 322

**ՀՐԱՏԱՐԱԿՎՈՒՄ Է ՀՀ ԳԱՎ ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏԻ
ԳԻՏԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԻ ՈՐՈՇՄԱՍԲ**

Հրատարակչական խմբագիր՝ Արտաշես Շահնազարյան

ԽԱՍԻՈՏԻՍ ԻՈԱՆՆԻՍ Կ.

Խ 322 Հունական քաղաքականությունը Հայկական հարցի վերաբերյալ (1876-1996) / Ի. Կ. Խասիոտիս ; Սալոնիկի Արիստոտելի անվան համալսարան ; Թարգմ.՝ Հ. Մ. Բարթիկյան ; Հրատ. խմբ.՝ Ա. Շահնազարյան.- Եր. : Պատմության ինստիտուտ, 2012.- 65 էջ:

Գրքույկը նվիրված է Հայկական հարցի վերաբերյալ 1876-1996 թթ. հունական քաղաքականության լուսաբանմանը: Ցույց է տրվել, որ այդ հարցի նկատմամբ հունական կողմի դրսևորած զգուշավորությունը պայմանավորված է ինչպես արտաքին գործոններով, այնպես էլ խնդրի էության թերիմացությամբ: Գրքույկը հասցեագրված է պատմաբաններին և ընթերցող լայն շրջանակներին:

ISBN 978-99941-73-68-6

ՀՏԴ 327
ԳՄԴ 66.4

©Պատմության ինստիտուտ, 2012

Իրաննիս Կ. Խասիոտիսի «Յունական քաղաքականությունը Հայկական հարցի նկատմամբ (1876-1996 թթ.)» աշխատության հայերեն թարգմանության կապակցությամբ

Իրաննիս Կ. Խասիոտիսը հայագիտության մեջ նոր անուն չէ: Նա տարիներ շարունակ զբաղվել է հայոց պատմության զանազան հանգուցային հարցերի ուսումնասիրությամբ, ստեղծել ծանրակշիռ աշխատություններ, դարձել հունահայ գաղութի պատմության ամենաճանաչված հետազոտողներից մեկը, արժանացել հայ գիտական ու հասարակական շրջանակների գնահատանքին: Հատկապես մեծ է Խասիոտիսի դերը Սալոնիկի հայության պատմության ուսումնասիրության բնագավառում: Նա մասնակցել է հայագիտական և բյուզանդագիտական բամազմաթիվ միջազգային գիտաժողովների, տարիներ շարունակ սերտորեն համագործակցել հայ գիտնականների հետ, մասնավորապես համաշխարհային ճանաչում ունեցող բյուզանդագետ, ՀՀ Գիտությունների ակադեմիայի պատմության ինստիտուտի միջին դարերի պատմության բաժնի երկարամյա վարիչ, ՀՀ նախագահի մրցանակի դափնեկիր, ակադեմիկոս Հրաչ Միքայելի Բարթիկյանի հետ:

Հատկանշական է, որ հույն ժողովրդի մեծ բարեկամ Հ. Բարթիկյանը, բարձր գնահատելով Ի. Խասիոտիսի ստեղծած հայագիտական ժառանգությունը և անկեղծ նվիրումը հայության հանդեպ, նրա հետ բարեկամությունն ու գիտական համագործակցությունը շարունակեց մինչև իր կյանքը վերջը՝ 2011 թ. օգոստոսը: Պատահական չէ, որ բազմավաստակ բյուզանդագետը, մեկդի թողնելով իր բազմաթիվ գործերը, մասնավորապես միջնադարյան Հայաստանի վերաբերյալ բյուզանդական սկզբնաղբյուրների (տվյալ դեպքում՝ Միքայել Ատտալիատեսի պատմության հայերեն ծեռագրի առաջաբանը)¹ ուսումնասիրության ու հրատարակության խնդիրը՝ ծեռամուխ եղավ հայ և հույն ժողովուրդների նոր և նորագույն պատմության հանգուցային ժամանակաշրջանի՝ 1878 թ. հետո ընկած շրջափուլին վերաբերող Իրաննիս Խասիոտիսի «Յունական քաղաքականությունը Հայկական հարցի նկատմամբ (1876-1996 թթ.)» աշխատության թարգմանությունը:

¹ Ակադեմիկոս Բարթիկյանը, անդուլ աշխատանքի շնորհիվ, բարեբախտաբար, կարողացավ ավարտել այդ աշխատության թարգմանությունն ու ծանոթագրությունները: Շուտով հույժ կարևոր այդ աշխատանքը ևս կհրատարակվի ՀՀ ԳԱԱ պատմության ինստիտուտի կողմից:

Այսին աշխատանքի թարգմանության և հրատարակության նախապատրաստման օրերին մեկ անգամ չէ, որ ականատես եմ եղել ակադեմիկոս Բարթիկյանի խանդավառությամբ՝ կապված Ի. Խասիոտիսի աշխատության մեջ տեղ գտած անկեղծ ու շիտակ հարցադրումների, իսկական գիտնականի կոչմանը, հույն մարդու նկարագրին հավատարիմ մնալու հեղինակի կեցվածքի հետ: Յ. Բարթիկյանն իր հոգու պարտքն էր համարում անավարտ չթողնել այդ գրքի թարգմանությունը (բարեբախտաբար, աշխատելով տառացիորեն մինչև կյանքի վերջին օրը, նա այդ շնորհակալ գործը հասցրեց իր ավարտին), քանի որ այն շոշափում էր երկու բախտակից ժողովուրդների պատմության հանգուցային հարցերը, անաչառ գնահատական էր տալիս հայ-հունական հարաբերությունների պատմության, այդ թվում՝ սովետում մնացած, ինչու չէ՞ նաև զանանգան խութերով անցած էջերին: Յենց այդ մղունով էլ Յ. Բարթիկյանն ինձ հորդորում էր գրքի թարգմանությունն ավարտելուց հետո անպայման կարդալ այն և հայերեն հրատարակության կապակցությամբ գրել մի առաջաբան: Խասիոտիսի գրքին ծանոթանալուց հետո (ավաղ, արդեն Բարթիկյանի մահվանից հետո) հանգզվեցի, որ այն իրապես գիտաքաղաքական մեծ կարևորություն ունեցող աշխատություն է և միանգամայն նոր խոսք հայ-հունական հարաբերությունների ու Չայկական հարցի նկատմամբ Յունաստանի վարած քաղաքականության վերաբերյալ:

Կարդալով հույն գիտնականի աշխատությունը՝ ընթերցողը համոզվում է, որ անաչառ գիտությունը և քաղաքականությունը, նույնիսկ՝ բարեկամ հայ և հույն ժողովուրդների պարագայում, միշտ չէ, որ հայտնվում են նույն հարթության վրա: Տվյալ դեպքում՝ Յունաստանի պետական քաղաքականությունը Չայաստանի նկատմամբ, մասնավորապես հայության համար կենսական նշանակություն ունեցող Չայկական հարցում, ըստ Խասիոտիսի՝ հաճախ չի բխել ոչ միայն հայ, այլև հույն ժողովրդի շահերից, հետևանք է եղել մեծ տերությունների թելադրանքի:

Առաջնորդվելով միմիայն գիտական անաչառության սկզբունքով և հույն ու հայ ժողովուրդների իրական բարեկամության ամրապնդման գիտակցումով՝ Խասիոտիսն ի սկզբանե խնդիր է դնում բացահայտել խնդրի բոլոր կողմերը՝ ընդ որում ավելի շատ քննության նյութ դարձնելով պատմության այն «մութ» էջերը, որոնք քաղաքական նկատառումներով հետազոտողների կողմից շրջանցվել են: Յույն գիտնականն այն կարծիքին է, որ հայ-հունական հարաբերությունների պատմության խութերի վերհանումն արդիական խնդիր է, քանի որ հնարավորություն է տալու նորագույն ժամանակներում, արդեն Յունաստան-Չայաստան միջպետական առնչություններում խուսափել դրանցից և մեծապես նպաստել երկու երկրների բարեկամական կապերի ամրապնդմանը:

Մենագրությունը հայ-հունական հարաբերությունների յուրահատուկ պատմական ակնարկ է: Այն համառոտ շոշափում է Հայաստանի նկատմամբ հունական քաղաքականության բազմապիսի հարցեր՝ Բյուզանդական կայսրություն-Հայաստան առնչություններ, Երուսաղեմի քրիստոնեական սրբատեղիների խնդրում Հունական ուղղափառ եկեղեցու վերաբերմունք, հայ-քաղկեդոնական դավանաբանական վեճեր, Օսմանյան կայսրության դեմ թուրքահպատակ ժողովուրդների համատեղ պայքար և այլն: Հեղինակը գովեստի խոսքեր է ուղղում հայ ազատագրական պայքարի նկատմամբ սրտացավ վերաբերմունք դրսևորած հույն գործիչների հասցեին և միաժամանակ՝ սուր քննադատության ենթարկում Հայկական հարցում Հունաստանի ոչ միշտ հայանպաստ պետական վերաբերմունքը:

Ազնիվ գիտնականը վրդովմունքով գրում է, որ հունական իշխանությունները մինչև 1890-ական թթ. անտարբեր են եղել հայ ժողովրդի կրած անասելի զրկանքների ու տառապանքների նկատմամբ և ինչպես ինքն է պարզել՝ «...չի գրառվել հիշատակության արժանի որևէ փաստ, որը հաստատեր Հայկական հարցի վերաբերյալ պաշտոնական Հունաստանի հետաքրքրությունը» (էջ 13): «Պետք եղավ պայթեն 1890-ական թվականների դրամատիկ դեպքերը,-շարունակում է Խասիոտիսը,- որպեսզի, ի վերջո, հունական կառավարությունների հետաքրքրությունը զարթնի: Առիթը Գումգափուլի հայկական ցույցն էր ու դրա արյունալի վախճանը 1890 թ. հուլիսի 15/27-ին: Կոստանդնուպոլսի հռևնական դեսպանատունը 1891 թ. մայիսին սկսեց կարծես ավելի սիստեմատիկ տեղեկություններ ժողովել հունական շահերին հայոց հուզումների ունենալիք հնարավոր բացասական հետևանքների վերաբերյալ» (էջ 15):

Հայկական հարցում պաշտոնական Աթենքի նման վերաբերմունքի քննադատությամբ չբավարարվելով՝ ազնիվ մտավորականը բացահայտում է նաև Հայաստանի հանդեպ Հունաստանի «տարօրինակ» քաղաքականությունը՝ պայմանավորված Օսմանյան կայսրության հետ իր ունեցած «շահերով»: Այդ կապակցությամբ կարդում ենք. «Մյուս հանգամանքը, որն իրոք ազդում էր հայոց նկատմամբ հունական քաղաքականությանը, անկասկած, հայ-թուրքական հարաբերություններն էին: Քանի դեռ դրանք լարված էին, հայկական ազգային շարժումը համակրանքով էր դիմավորվում: Սակայն երբ Աթենքը հետամտում էր (օրինակի համար 1880-ականներին) Բարձր դռան հետ գլուխ բերել խաղաղ մի *modus vivendi*, հայկական ապստամբական մախաձեռնությունների հանդեպ հունական պաշտոնական դիրքը դառնում էր զգուշավոր, եթե ոչ թշնամական: Եվ դա այն պատճառով, որ հույները չէին ցանկանում «Արևելքի» քաղաքական քարտեզի վրա «վաղահաս և անժամանակ» տակնուվրա-

յություններ, քանի դեռ հունական թագավորությունը չէր հասել պետական մեքենայի նորացմանը, նրա տնտեսական և ռազմական վերակառուցմանը» (էջ 19): Ցավալի է, որ նման դեպքերում, ըստ Խասիոտիսի դիտարկման, հակահայկական արշավին միանում էին նաև հունական պաշտոնական որոշ պարբերականներ:

Գիրքը նոր լույս է սփռում բազմաթիվ հիմնահարցերի վրա՝ Առաջին աշխարհահամարտի նախօրյակին հայկական բարենորոգումների հարցում Յունաստանի դիրքորոշում, պատերազմի տարիներին կամավորական շարժում, Փարիզի վեհաժողովի շրջանակներում հայ-հունական համագործակցություն, Տրապիզոնի պատկանելության շուրջ բանակցային գործընթաց և հատկապես 1918-1920 թթ. միջպետական հարաբերությունների մանրամասներ և այլն: Այս բաժնում հեղինակն արժանին է մատուցում ժամանակի քաղաքական գործիչներին, մասնավորապես Յունաստանի վարչապետ Էլիֆթերիոս Վենիզելոսին՝ հայ-հունական պետական ու հասարակական կապերի մերձեցման բնագավառում ունեցած ավանդի համար: Առանձին շեշտադրումներ են արվում նաև Հայաստանի խորհրդայնացումից հետո հայ-հունական հարաբերությունների բովանդակության փոփոխության կապակցությամբ՝ պայմանավորված ԽՍՀՄ կազմում Հայաստանի արտաքին քաղաքականություն վարելու հնարավորությունների փաստական բացակայության հետ: Հեղինակը վերջում ոգևորությամբ խոսում է Հայաստանի անկախացումից հետո հայ-հունական ռազմական, քաղաքական ու տնտեսական համագործակցության մասին՝ հույս հայտնելով, որ այն ապագայում մեծ զարգացում է ապրելու՝ վասն երկու բարեկամ երկրների ու ժողովուրդների բարգավաճման:

Աշխատանքը կարդացվում է մեծ հետաքրքրությամբ՝ առավել ևս, որ թարգմանությունն իրականացված է լեզվական բարձր մակարդակով: Հայ ընթերցողների դատին հանձնելով սույն աշխատությունը՝ համոզված եմք, որ այն իր կարևոր նպաստը կբերի ինչպես հայ-հունական դարավոր կապերի նշանակությունը ճիշտ ըմբռնելու, այնպես էլ առաջիկայում Յունաստան-Հայաստան միջպետական հարաբերությունները ռազմավարական գործակցության աստիճանի հասցնելու համար:

Աշոտ Մելքոնյան
պրոֆեսոր, ՀՀ ԳԱԱ պատմության ինստիտուտի տնօրեն

ԻՌԱՆՆԻՍ Կ. ԽԱՍԻՈՏԻՍ
ՍԱԼՈՆԻԿԻ ԱՐԻՍՏՈՏԵԼԻ ԱՆՎԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ
ՀՈՒՆԱՍՏԱՆ

ՊԱՏՄԱԿԱՆ-ԱՎԱՆԴՈՒՅԹ-ԵՎ-ՔԱՂԱՔԱԿԱՆ
ԻՐԱՊԱՇՏՈՒԹՅՈՒՆ

ՀՈՒՆԱԿԱՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ
ՀԱՅԿԱԿԱՆ ՀԱՐՑԻ ՎԵՐԱԲԵՐՅՅԱԼ
(1876-1996)

Richard Clogg -ին
Ի նշան վաղեմի ծանոթության

Հակառակ «Հունա-հայկական բազմադարյան եղբայրության» մասին պետական հայտարարություններին (որոնք, որպես կանոն, արվում են տարեդարձային կամ դիպվածային ելույթներում), հատկապես անցած վաթսունամյակի ընթացքում հունական արտաքին քաղաքականությանը նախնական անդրադարձն անգամ բավական է ցույց տալու անորոշությունն ու երկինաստությունը բնորոշող (և, որոշ չափով, շարունակում է բնորոշել) հունական (պաշտոնական և կիսապաշտոնական) դիրքը հայկական դիվանագիտական ու քաղաքական լուրջ հարցերում: Նման մարտավարությունը, իմ կարծիքով, թելադրվում է մշտական մի երկյուղով, ինչն ավանդաբար բնորոշում է հունական արտաքին քաղաքականությունը՝ ի դեմս հնարավոր երկրաքաղաքական բարդ խնդիրների թերևս անակնկալ զարգացման: Հունական զգուշավորությունը հաստատ նվազեց, սակայն, Այսրկովկասում ծագած ձգնաժամից հետո չդադարեց գոյություն ունենալուց, ձգնաժամ, որը հետևեց 1991 թվականին խորհրդային վարչակարգի փլուզմանը և դրան հաջորդած տարածաշրջանի նախկին խորհրդային հանրապետությունների անկախացմանը: Ղարաբաղի (Արցախի) տիրակալության խնդիրը, օրինակ, որը գոնե անուղղակիորեն կարող է առնչվել հունական արտաքին քաղաքականության զգայուն,

սրված իրավիճակների հետ (օրինակ՝ Հունաստանին հարևան Կոստվոյի), Երևանի հարաբերություններն իր հարևանների, նախ և առաջ, անշուշտ, Անկարայի հետ, ավելի մեծ զսպվածություն պարտադրեց Աթենքի դիրքին : Այդուհանդերձ, Հայկական հարցի, պիտի ասեինք, ի նորո դրսևորման հանդեպ Աթենքի դիրքը, իմ համոզմամբ, մեծ չափով պարտական է նաև հունական կողմի թերինացությանն այս խնդրի (հին և նոր) իրավիճակներին, որոնք, զոնե իրենց պատմական հեռանկարներում, խիստ հետաքրքրում են Հունաստանին և հույն ժողովրդին: Պիտի ձեռնարկեմ ճշգրտորեն ներկայացնել դերակատարներին և պատմական այն տվյալները, որոնք մի դեպքում միավորում էին հունական և հայկական դիրքերը, իսկ մի այլում՝ ժխտում:



Արդեն 19-րդ դարի կեսերից Տիեզերական պատրիարքարանի խրախուսմամբ երկու ազգությունների սերտացման համար սկսվել էին ինչ որ ջանքեր գործադրվել. օրինակի համար, նախկին Տիեզերական պատրիարք (1830-1834 թթ.) Կոստանդինոս Ա-ն (1777-1859 թթ.) անանուն 55 էջից բաղկացած մի տեքստ հրատարակեց հայոց և հույն ուղղափառ եկեղեցու միջև առկա ոչ էական տարբերությունները վերացնելու նպատակով՝ «Հաշտեցման և Միության»¹: Երկու տարի անց Տիեզերական պատրիարք, Խալկեի Աստվածաբանական դպրոցի հիմնադիր Գերմանոս Դ-ն (1842-1845 թթ.), Կոստանդնուպոլսի հույն ուղղափառ երիտասարդությանը դրդում էր սովորել հայերեն, որպեսզի փոխհասկացողությունը և երկու ազգությունների եկեղեցական ու հասարակական մերձեցումն ավելի դյուրին լինի²: Այդուհանդերձ, այդ ջանքերը (որոնք սակավաթիվ բացառություններով անհրաժեշտ շարունակություն չունեցան), զխափորապես սահմանափակվեցին եկեղեցաբանական բնագավառում և, բոլոր դեպքերում, զոնե նշմարվող քաղաքական բնույթ չէին բովանդակում³: Ուստի, հույների և հայոց քաղաքական առաջին բացահայտ շփումը տեղի ունեցավ հենց որ 1876-1878 թթ. պայթեց Արևելյան հարցի մեծ ձգնաժամը,

որոշակի՝ 1876-1877 թթ. ձմռանը, Կոստանդնուպոլսի կոնֆերանսի գումարման շրջանակներում (11/23 դեկտեմբեր 1876-20 հունվար 1877 թթ.): Հենց այն ժամանակ առաջին անգամը լինելով՝ հույներին սկսեց զբաղեցնել Հայկական հարցի քաղաքական կողմը:

Բոլոր դեպքերում հունա-հայկական մերձեցումը սկզբնական շրջանում անուղղակի էր. վերաբերում էր օսմանյան մայրաքաղաքում հույն դեսպան (1875-1881 թթ.) Անդրեաս Կունդուրիոտիսի (1820-1881 թթ.) առավելապես աններդաշնակ ջանքերին, ապա նաև Կրետեի, Թեսալիայի, Էպիրոսի, Մակեդոնիայի ու Թրակիայի ներկայացուցիչների՝ մի կողմից, և մյուս կողմից Կոստանդնուպոլսի հայոց պատրիարք Ներսես Բ Վարժապետյանի (1873-1884 թթ.) ջանքերին՝ Կոստանդնուպոլսի կոնֆերանսում եվրոպական մասնակից պետություններին համոզելու գոնե նկատի առնել քրիստոնյա բնակչությանը նահանգներում վարչական բարենորոգումների շուրջ իրենց դիմումները⁴:

Այդ ջանքերը մատնվեցին անհաջողության, ինչպես որ անհաջողության մատնվեց նաև կոնֆերանսը⁵: Եվրոպական կառավարությունների լիազորներն իրենց խնդիրները կարճատեսորեն սահմանափակեցին սոսկ Բոսնիայում, Հերցեգովինայում և Բուլղարիայում ծագած ձգնաժամի հարուցած խնդիրների լուծման ուղղությամբ⁶:

Այդուհանդերձ, հենց այդ ժամանակ Կոստանդնուպոլսում կային իրերի հանդեպ տարբեր մոտեցում ունեցող արևմտաեվրոպացի դիտորդներ: Խոսուրն են հույների և հայերի խաղացած դերի վերաբերյալ բրիտանացի ռազմական փորձագետի՝ գնդապետ Robert Home-ի դատողությունները:

«Մեծ սխալը, - գրում է նա 1877 թ. հունվարին, - որ գործում է անգլիական ժողովուրդը, ապա այստեղ (Կոստանդնուպոլսում) լորդ Սalisbury-ն կատարել է ահավոր կերպով, կարծես համոզված լինելով, որ խաղին մասնակից ժողովուրդները երեքն են՝ ռուսները, անգլիացիներն ու թուրքերը: Սակայն այժմ ամենից հզոր խմբակցությունը հույներն են, նրանցից հետո՝ հայերը: Հույները լորդ Սalisbury-ի կողմից կոնֆերանսում էլ բացեիբաց անտեսվեցին, դրա համար էլ նրանք կոնֆերանսին հակադրվեցին ատամներով ու եղունգներով...»⁷:

Այնուամենայնիվ, կոնֆերանսի վերջին նիստում լիազոր կոմս Նիկոլայ Պավլովիչ Իզնատևը (1832-1908 թթ.) և նրա բրիտանացի գործակից մարքիզ Salisbury-ն երկու ազգությունների վերաբերյալ ինչ որ հետաքրքրություն ցուցաբերեցին: Սակայն, նրանց հետաքրքրությունն ամենից առաջ նպատակադրված էր ռուս-թուրքական ընդհարումից ակնկալվող առավելություններ հայթայթելուն: Իզնատևը մի կողմից առանց որոշակի հատուցումների հետամտում էր հույների և հայերի հուզական նախա-տրամադրվածությունն ընդդեմ Բարձր դռան՝ նրանց ցուցաբերելիք օժանդակության համար, իսկ մյուս կողմից՝ քողարկված հետամտում էր խոչընդոտել նախաձեռնությունը, ինչպես նաև Պետերբուրգից խնդրի «հետաքրքրության» մեռաշնորհը երկու ժողովուրդների համար⁸: Սակայն Բարձր դռնն էլ էր նախաձեռնել ինչ-որ «համարձակություն», նպատակ ունենալով իր քրիստոնյա հպատակներին քաշել իր կողմը՝ ընդդեմ ռուսների: Այդուհանդերձ, կայսրության արևելյան նահանգներում անկարգ քրդերի և գաղթական չերքեզների կողմից քրիստոնյա⁹, գլխավորապես հայկական բնակչության ջարդերից և ամեն տեսակի հալածանքներից հետո օսմանյան ինքնատիպ պառլամենտի հույն ու հայ պատգամավորները, նրանց երկու պատրիարքարանները՝ 1877 թ. գարնանն ու ամռանը միահամուռ ընդդիմացան: Հատկապես Կոստանդնուպոլսի հույն երեսփոխաններ Վասիլակի բեյ Սարակիոտիսի և Նիկոլակի Սուլլիդիսի խիստ բողոքը 1877 թ. 14/26 հունիսին¹⁰, կարելի է համարել Հայկական հարցի պաշտոնական առաջին բարձրացումն Օսմանյան կայսրությունում¹¹:

Այս գործողություններում Աթենքի կառավարության դիրքորոշումը դեռևս ուսումնասիրված չէ: Այդուհանդերձ, ես անհավանական եմ համարում, որ այդ նախաձեռնությունները կատարվեցին առանց գոնե Կոստանդնուպոլսի հունական դեսպանատան հավանության, հատկապես մի ժամանակաշրջանում, երբ օսմանյան մայրաքաղաքի հունական և հայկական մամուլներն այս իրադարձությունների վերաբերյալ իրենց նախաձեռնությունները երկուստեք համաձայնեցնում էին՝ նկատի ունենալով դրանց հնարավոր հետևանքները կայսրության քրիստոնյա տարրի համար¹²:

Երկընտրանքներ և հակասություններ ի հայտ եկան միայն ռուս-թուրքական պատերազմի հայտարարումից հետո (24 ապրի-

լի 1877 թ.): Հակառակ Իզնատևի խաբեպատիր նախաձեռնություններին, Սանկտ-Պետերբուրգի դժկամությունը՝ պատերազմին մասնակցելու դեպքում Հունաստանին տալու որևիցե երաշխիքներ, ապա նաև ցարական վարչակարգի մերժումը՝ Այսրկովկասում իր հայկական տիրույթներին շնորհելու մի ձևական վարչական ինքնավարություն, ինքնախաբեության տեղ չէին թողնում¹³: Ահա դրա համար Օսմանյան կայսրության երկու ազգություններն էլ պատերազմում իրենց կրոնակից ռուսներին էապես չսատարեցին: Հատկապես հայ պատրիարք Ներսեսը Կոստանդնուպոլսի բրիտանական դեսպանին 1877 թ. ապրիլի 26/մայիսի 8-ին պաշտոնապես հայտարարեց, թե հայոց ազգն օսմանյան տիրապետությունը հաստատապես գերադասում է ռուսական բռնապետությունից¹⁴: Նույն զգուշավորությունը հանդես բերեց Կարսի, Էրզրումի և Ալաշկերտի (Eleskirt) թոհուրոհի մեջ գտնվող հայ ազգաբնակչությունը: Մեծ մասը հրաժարվեց մարտերին մասնակցել, անտեսելով անգամ այն գրգռիչ իրողությունը, որ Կովկասի ռուսական բանակում ծառայում էին զգալի թվով ազգակիցներ և հայազգի սպաներ¹⁵: Սակայն նման դիրքորոշումը, ինչպես ասվում է և այլուր, հալածանքներից ու աղետներից չձերբազատեց արևելյան Փոքր Ասիայի հայկական տարրը:

Բացի այդ, նաև Աթենքում արևմտյան տերությունների և հունական «տիեզերական» կառավարության ճնշումներն ու նախազգուշական սպառնալիքները թույլ չէին տալիս դիվանագիտական համարձակ մանևրների դիմելու: Այնուհետև հայտնի էր, որ պատերազմն առավելապես տեղի էր ունենում Բալկանների սլավոնական ժողովուրդների օգտին, նախ և առաջ՝ բուլղարների և ոչ թե Օսմանյան կայսրության բոլոր քրիստոնյա ազգությունների համար: Ինչ էլ լինի՝ հունական անտարբերությունը, ինչպես հայտնի է, տևեց միայն մինչև պատերազմական գործողությունների առաջին փուլը: Ինչքան որ ռուսական զորքերը դանդաղում էին իջնել դեպի Բալկաններ, հույները բրիտանացիների հրամաններին ցուցաբերած «օրինապահության» համար ակնկալում էին ինչ որ փոխհատուցում: Սակայն, երբ Պլենայից (Պլենն) անակնկալ սկսվեց ռուսական կայծակնային արշավը (10/22 դեկտեմբերի 1877 թ.) Սոֆիա, այնտեղից էլ Ադրիանուպոլիս (8/20 հունվարի 1878 թ.), նրանց վարանումը տեղիք տվեց ջղածիզ շարժումների՝

պատերազմի մեջ (12/24 հունվարին) ուշացած մուտքը, Թեսալիա ներխուժումն ու անփառունակ նահանջը՝ ռուս-թուրքական զինադադարի հայտարարումից 1878 թ. հունվարի 31/ փետրվարի 12) հետո¹⁶:

Ռուսական հաղթանակներն ի վերջո և՛ հունական, և՛ հայկական մարտավարությունների մեջ փոփոխություններ մտցրին: Այս խճճված վիճակում Օսմանյան կայսրության հունական տարրը, որի վրա, հարկավ, ազդում էր «ազգային կենտրոնի» դիրքորոշումը, ինչպես և իր անմիջական ապագայի հետ կապված այլ գործոններ, երկփեղկվեց. քանի որ Թրակիայի և Կոստանդնուպոլսի հույները, որոնք իրենց հայրենի վայրերում սլավոնական տիրապետության պատճառով պիտի ստիպված լինեին որոշակի վտանգներ դիմագրավել, աննշան ցանկություն ունեցան ռուս ներխուժողներից իրենց պաշտպանությանն համար նյութապես ու բարոյապես օժանդակելու Բարձր դռանը¹⁷: Սակայն Թեսալիայի և Էպիրոսի նրանց հայրենակիցները, որոնք զայրացած էին այնտեղ արդեն սկսված հեղափոխական շարժումներից, ինչպես և օսմանյան տեղական իշխանությունների զործադրած անվտանգության դաժան միջոցներից, նախապատվությունը տվեցին ուժային այլ լուծումների (մասնակցություն հակաթուրքական շարժումներին և այլն): Այդպիսիք էին կրետացիների ելույթները, հատկապես իրենց կառավարիչների առաջին փորձերի հանդեպ (1878 թ. սկիզբ) ուղղված 1868 թ. գործող առանձին օրենքների վերացմանը¹⁸:

Ինչպես սպասելի էր, Պոնտոսի հույների ու Փոքր Ասիայի արևելյան նահանգների քրիստոնյա տարրի դիրքորոշման վրա ազդեց, այն իրարանցումը, որ առաջացրին ռուսների արևմտյան առաջխաղացումները, ապա և թուրքական հակահարձակումները¹⁹: Վիճակն օրհասական դարձավ 1877 թ. հունիսին Բայազեդում (Bayazit (Doğubeyazit) կազակների հարձակումների դադարեցումից հետո, և սահմանային տակնուվրա եղած շրջանների քրիստոնեական գյուղերի վրա քուրդ ու չերքեզ խուժանի հարձակումների սկզբնավորմամբ²⁰:

Անգլիացի ականատես վկա Charles Norman-ի նկարագրության համաձայն, 1877 թ. ամռանը, մոտ երկու ամսվա ընթացքում քրդական ասպատակությունների, ապա և խառնադրակազմի բնակչության ու զորքերի ստիպողական տեղաշարժերի պատճառով Ալաշկեր-

տի բարձրավանդակում ավերակ դարձավ ավելի քան հարյուր տաս գյուղ, գրեթե բոլորը քրիստոնեական (գլխավորապես հայկական)²¹: Այս պայմաններում Օսմանյան կայսրության հույների ղեկավարությունը 1878 թ. փետրվարի սկզբներին Սան Ստեֆանոյում կարող էր սահմանափակվել ռուսների հետ մի քանի ոչ պաշտոնական շփումներով²²: Հայերը, ընդհակառակը, իրենց ներկայացուցչության հետ մեծ դուքս Նիկոլայ Նիկոլայեվիչի (1878 թ. 19 փետրվարի/3 մարտի) և Իգնատևի երկբայելի հանդիպումից հետո կարողացան ռուս-թուրքական 1878 թ. 19 փետրվարի (3 մարտի) պայմանագրում մապահովել շատ ծեծված 16-րդ հողվածը, որով ռուսների գրաված «հայկական նահանգներից» նրանց հեռանալը կապվում էր Բարձր դռան կողմից հիշյալ նահանգների հայկական բնակչության օգտին կատարվելիք վարչական էական միջոցառումների հետ²³:

Հիշյալ իրողությունները բավականին հայտնի են և անհրաժեշտություն չկա, որ կրկնվեն այստեղ, ոչ էլ քննության առարկա դառնա, թե ի՞նչ հետևանք ունեցավ 1876-1878 թթ. Արևելյան ձգնաժամը (Կիպրոսի վերաբերյալ անգլո-թուրքական պայմանագիր, Բեռլինի կոնգրես), որը և վերջնականապես միջազգայնացրեց Հայկական հարցը²⁴: Սակայն, անհրաժեշտ է ընդգծել, որ այն գործիչներից ոմանց, ովքեր հաջորդ քառասուն տարվա ընթացքում հայկական ազգային շարժման հարցում հունական քաղաքականության վրա պիտի ազդեցություն ունենան, պետք է որոնել հիշյալ տասնամյակի իրավիճակներում ծնունդ առած պարագաներում: Բացի այդ, ռուս-թուրքական պատերազմի ավարտով սկիզբ առավ նաև Թուրքիայի կողմից հույների ազգային ձգտումների հանդեպ մոտեցման փոփոխությունը: Հույները պահանջում էին Սան-Ստեֆանոյի պայմանագրի բուլղարամետ պայմանների արմատական վերանայում, ապա և հայերի (որոնք հետամտում էին ապահովել 16-րդ հողվածի անհողդողությունը)²⁵: Համենայնդեպս դա չխանգարեց, որ Բեռլինի վեհաժողովի նախօրեին իրականանա հունա-հայկական մի մերձեցում ևս, այս անգամ՝ Օսմանյան պետության սահմաններից դուրս: Խոսքը վերաբերում է 1878 թ. մայիսին Մանչեստերի ու Լոնդոնի հունական և հայկական համայնքների ընդհանուր ջանքերին՝ ապահովելու զոնե բարոյական փոխադարձ աջակցություն: Հայոց կողմից Բեռլինում դրանք

գլխավորեցին հայոց ներկայացուցչության ղեկավար, նախկինում Կոստանդնուպոլսի պատրիարք (1869-1873 թթ.) Մկրտիչ Խրիմյանը՝ «Հայրիկը» (1820-1907 թթ.), հունարենին քաջ տիրապետող հրապարակախոս Մինաս Չերազը (1852-1927 թթ.), ապա նաև հայոց համայնքի ներկայացուցիչ Շ. Կ. Papazian-ը, իսկ հունական կողմից՝ Լոնդոնի հունական կոմիտեի նախագահ Անտոնիոս Ռալլիսը (1812-1882 թթ.) և, որ ավելի կարևոր է, Մեծ Բրիտանիայում հույն հավատարմատար և Բեռլինի վեհաժողովում հունական ներկայացուցչության անդամ Իոաննիս Գեննադիոսը (1844-1932 թթ.)²⁶: Հիշյալ անձնավորությունների ելույթներում, որոնք հրատարակվեցին և բաժանվեցին Լոնդոնի «Hellenic Committee»-ի հոգացողությանը, բացի հաճոյախոսություններից կան նաև մի քանի ակնբախ ցուցումներ՝ թուրքատիրական Արևելքում երկու կողմերի միջև ապագայում հնարավոր քաղաքական համագործակցության մասին²⁷:

Հակառակ հունա-հայկական քաղաքական համագործակցության մասին այդ ոգևորիչ հայտարարություններին, դրանք էական շարունակություն չունեցան: Անգամ հենց առաջին իսկ առիթով, թեկուզ և Բեռլինում երկու ազգությունների ներկայացուցիչների կողմից չարժևորվեցին: Ինչպես հունական ներկայացուցչությունը, այնպես էլ հայկականը, գործեցին առանձին առանձին և ամեն մեկը ձեռք բերեց նույնօրինակ հիասթափեցուցիչ արդյունք: Վեհաժողովի վերջնական որոշումներում, բացի Էպիրոս-Թեսալիային վերաբերող «տարաբախտ» 24-րդ հոդվածից, Կրետեի հույներին և Փոքր Ասիայի հայերին վարչական ինքնավարության շնորհման պահանջը, ինչպես շուտով պարզվեց, հանձնվում էր Վեհաժողովի 23-րդ և 61-րդ ոչ հստակ հոդվածների կիրառմանը (դրանք համապատասխանաբար վերաբերում էին Կրետեին ու «Հայկական վիլայեթներին»՝ Բարձր դռան և պիտի բխեին Աբդուլ Համիդ Բ սուլթանի (1876-1909 թթ.) բարի մտադրություններից²⁸:

1890-ական թվականների սկզբներից, ինչքան ես կարողացա պարզել, չի գրառվել հիշատակության արժանի որևէ փաստ, որը հաստատեր Հայկական հարցի վերաբերյալ պաշտոնական Հունաստանի հետաքրքրությունը²⁹: Սակայն երկիրը (Հունաստանը) ջանքեր էր թափում, որպեսզի վերջապես անհոժար Բարձր դռնից պոկի Թեսալիայի գիջման մասին Բեռլինի որոշումների

իրագործումը: Այդ վիճակն այդպես էլ կախյալ մնաց մինչև 1882 թ.: Հետևեց հույն-թուրքական հարաբերությունների ճգնաժամը, որի պատճառը Ֆիլիպպուպոլսում 1885 թ. տեղի ունեցած բուլղարական պետական հեղաշրջումն էր³⁰: Մյուս կողմից, Օսմանյան կայսրության հունական տարրի հասարակական ղեկավար խմբերը քաղաքական, ինչպես նաև սուլթանահպատակ տարածքներում և Հունաստանում ու Սփյուռքում իրենց տպավորիչ տնտեսական նվաճումների պատճառներով արտակարգ կասկածամիտ էին, եթե ոչ թշնամական «Արևելքում» status quo-ի փոփոխման յուրաքանչյուր փորձի հանդեպ (որոնց վրա ազդում էր նաև Աթենքի դիրքը)³¹:

Հարկավ, նման նվաճումներ կարող էին ունենալ նաև նրանց հայ համաքաղաքացիները, գոնե քաղաքային և առևտրական կենտրոնների: Սակայն այդ զարգացումն ավելի հաճախ համագործակցությանը խանգարող մրցակցության երևույթների պատճառ էր դառնում: Օրինակի համար, երբ 1894 թ. Կոստանդնուպոլսի հայ մասոնները հույներին խնդրեցին միանալ, վերջիններս, հետևելով 1870-ի տասնամյակում Կլեանթիս Սկալիերիսի (1833-1893 թթ.) սկիզբ դրած մարտավարությանը, նախապատվություն էին տալիս օսմանցիների հետ քաղաքական մերձեցմանը³²: Այս ընդհանուր եղանակի պայմաններում բարձրացող հայկական մտավորականությունը, որքան օսմանյան, այնքան էլ ցարական երկրում, 1878 թ. հիասթափությանը զուգահեռ, ազգային խնդրում որոնում էր նաև այլ, ավելի քաջահմուտ ելքեր³³:

Ուստի պարզվում է, որ քաղաքական խնդիրներում երկու ազգությունները միմյանց հետ չէին առնչվում: Ինչ որ առանձին անհատների պատահական գործողությունները, որոնք ես ի մի բերեցի, ոչ կապ ունեին, ոչ շարունակություն, ավելի բանասիրական էին, քան քաղաքական, ինչպես, օրինակ, 1878 թ. Բեռլինի վեհաժողովի ժամանակ հույն դեսպան Ալեքսանդրոս Ռիզոս Ռանգավիի (1809-1892 թթ.) Լոնդոնի Հայ-անգլիական կոմիտեի «Հայաստան» թերթում լույս ընծայած հայասիրական հոդվածը, որում հույն հեղինակն ու դիվանագետն ընդգծում էր կրետական պահանջատիրության ճակատագրի առնչությունը հայկականի հետ³⁴: Առավել հետաքրքրական է շատ գործունյա մտավորական և լրագրող Թոմաս Ա. Պասխալիդիսի (1836-1890 թթ.) Աթենքում 1880 թ. հրատա-

րակած մարտական հողվածք, որում հեղինակը երկու ժողովուրդների համար ընդհանուր մի քանի խնդիրների պատմական ինչ որ համեմատություններից հետո ներկայացնում է (իր ժամանակաշրջանի համար ավելի ուտոպիական) ապագայում իրենց գործակցության մասին սեփական գաղափարները³⁵: Մոտավորապես նույն ժամանակաշրջանում (1883 թ.) Սերբետում հույն հյուպատոս Նապոլեոն Բեցոսը, ով մի քանի տարի առաջ (1876-1881 թթ.) ծառայել էր Տրապիզոնում, ներքին գործոց նախարարության իր ղեկավարներին ուղղած մի խանդավառ հաշվետվությունում ջանացել էր Աթենքի ուշադրությունը բևեռել հայկական բարձրացող ազգային շարժման հզորության վրա, միաժամանակ անցկացնելով հույն ուղղափառ կողմի համար հոռի զուգահեռներ,³⁶ ընդգծելով այդ գործում հայ եկեղեցու լուսավորյալ ղեկավարության խաղացած նշանակալից դերը.

Մոտավորապես մեկ հնգամյակ ես ծառայել եմ Տրապիզոնում, որի վիճայեթում հայեր են ապրում. ճանաչեցի, ինչքան կարողացա, հայկական տարրը և հաճախ ցավ զգացի այդ դժբախտ ժողովրդի, քրիստոնյա ազգի հոգևորականության աննկարագրելի անկման համար: Մարդ պիտի նկատեր 1878 և հատկապես 1879 թվականից, կարճեմ մոզական գավազանով սկիզբ առած փոփոխությունն ու կերպարանափոխությունը: Բազմաչարչար և ստորացած կյանք վարած հայ եպիսկոպոսներն սկսեցին թելադրել՝ կազմակերպվեցին հնարավորինս ազգային դեմք ունեցող լավ վիճակում գտնվող դպրոցներ: Եպիսկոպոսները նշանակվում էին տեղին: Նախկին պատրիարք Կերմիանը (Խրիմյան) ընդունեց Վանի եպիսկոպոսությունը: Մի խոսքով, հայոց ցիրուցան եղած ու ճնշված, դժբախտ ազգի վրա ազգային շունչ փչեց: Ինչպե՞ս հանկարծակի սկսվեց փոփոխությունը, որը, ինչպես երևում է, շարունակվում է: Պատճառը պարզ է ու հայտնի. վճռական շունչ հաղորդեց մի այր, Կոստանդնուպոլսի պատրիարք նշանակված Ներսեսը, հաղորդակից և գործակից ունենալով անվեհեր ու խորամիտ, նախկին պատրիարք Խրիմյանին: Նա սկսեց բզիկ բզիկ եղած ազգը շարժման մեջ դնել, բոլորի կողմից մերժված ու կտոր կտոր եղած ազգը, գետին տապալված ազգը ...³⁷

Պետք եղավ՝ այսթեն 1890-ական թվականների դրամատիկ դեպքերը, որպեսզի, ի վերջո, հունական կառավարությունների

103328

հետաքրքրությունը գարթնի: Առիթը Քունքափուի հայկական ցույցն էր ու դրա արյունալի վախճանը 1890 թ. հուլիսի 15/27-ին³⁸: Կոստանդնուպոլսի հունական դեսպանատունը 1891 թ. մայիսին սկսեց կարծես ավելի սիստեմատիկ տեղեկություններ ժողովել հունական շահերին հայոց հուզումների ունենալիք հնարավոր բացասական հետևանքների վերաբերյալ: Հայոց գործերին քաջածանոթ երկու նշանավոր անձնավորություն, որոնք գործուն մասնակցեցին հույն ուղղափառ համայնքի կյանքին, այն է հայագիտակ աստվածաբան և Տիեզերական պատրիարքարանի առաջին «սուրհանդակ» Դիմիտրիոս Ցոլակիդիսը (Ձոլակիդիս) և Կոստանդնուպոլսի նախկին պատգամավոր Նիկոլայոս Սուլլիդիսը պատրաստակամությամբ շտապեցին օսմանյան մայրաքաղաքում այն ժամանակվա (1889-1902 թթ.) հույն դեսպան Նիկոլայոս Մավրոկորդատոսի (1837-1903 թթ.) համար հայկական ազգային շարժման վերաբերյալ բավարար և հետաքրքիր տվյալներ հայթայթել: Ցոլակիդիսը, որը քաջածանոթ էր հայկական «millet» կազմակերպությանը, 1891 թ. մայիսի 17-ին Սուլլիդիսին ներկայացրած իր զեկույցում հատուկ խստությամբ քննադատեց հայ կղերի հետ հույն ուղղափառ կղերի՝ ընդհանուր ազգային շահերը պաշտպանելու նպատակով համագործակցել չկամենալը: Նա վստահ էր, որ համախոհության պակասը վկայում է մի կողմի (զլխավորապես հույն-ուղղափառ) գայրացուցիչ անգիտությանը մյուս կողմի մասին: Դրա համար նա ներկայացրեց նրա արդյունավետ գործելու վերաբերյալ հինգ միջոցառումներից մի տրցակ.

Թեև, այդ ընթացքում երկու կողմից էլ փչացած մարդուկների կողմից տեղի ունեցան ինչ որ անպատշաճություններ, դրանք պետք է վերագրել ստրկությունից առաջացած վայրենացմանը, առավել ևս հայոց նկատմամբ մեր կղերի աններելի վերաբերմունքին, ինչը մինչև օրս անգամ, որոշ պայմաններում, անզգամորեն, հակաքրիստոնեաբար և վայրենաբար վիրավորում է հայոց կրոնական և ազգային ինքնասիրությունը, մի ազգի, որը մեր հանդեպ այնքան բարեկամաբար և համակրանքով է վերաբերվում, առավել քան որևէ ուղղափառ ազգի: Մեր լայնաթևք աստվածաբաններից ո՞ր մեկը հետազոտեց և մեզ ծանոթացրեց հայոց եկեղեցու ճշմարիտ հավատամքին... Ուստի արդեն ժամանակն է, որ մենք՝ հույներս, որ ճանաչելով մեր արևելյան ազգային շահերը, պարզել



ենք մեր բարոյական ու մտավոր զարգացման դրոշը, պարտավորված լինենք փութաջանությամբ զբաղվելու նաև այդ բարեկամ ազգությամբ, հույնից հետո արևելքում այդ ամենանշանակալից, մեզ հետ նույն շահերն ունեցող տարրով, որը տազնապալից սպասում է այն պահին, երբ առավել առողջ, առավել մարդասիրական գաղափարներով օժտված, պիտի կարողանա իր վրայից թոթափել ժամանակների իրար վրա դիզված պատահարներն ու փորձությունները...³⁹

Սուլիդիսը Ցուլակիսի տեքստը Մավրոզորդատոսին փոխանցելով, հայտնեց առաջարկի նկատմամբ իր համերաշխությունը: Հարկավ, առիթը բաց չթողեց արտահայտելու սեփական փորձառությունը, սկզբում հայերի նկատմամբ իր հայրենի շրջանի՝ Կապպադոկիայի, համերկրացի հույների տածած բացասական նախապաշարմունքները, ապա նաև այն ամենադրական ձևը, որով Օսմանյան կայսրության հայկական տարրը (Պատրիարքարան, ծխական համայնքներ, հասարակական խորհուրդներ, մամուլ և այլն), նախածեռնեց օսմանյան պառլամենտում դատապարտելու 1877 թ. հայ բնակչության հալածանքները «կարդուխների» (քրդերի - Հ. Բ.) կողմից: Նա ընդգծեց նաև «հունագետ Պողոս պատրիարքի» (Կոստանդնուպոլսի պատրիարք Պողոս Թաքթաքյանի (1863-1865 թթ.) նախածեռնությամբ մի գործունյա «Հունա-հայկական ընկերության» հիմնադրումը, որը սակայն «Ալի փաշայի (Mehmed Emin Ali Pasa) 1867-1871 թթ. մեծ վեզիրի) «համառ պահանջով» լուծարվեց և ընդհանրապես «երկու եղբայր ու համաչարչար ազգերի և եկեղեցիների» միջև համագործակցության ոգու պահպանման ուղղությամբ արված ջանքերը»⁴⁰:

Հույն դեսպանն իր կողմից ջանաց այդ շարժման շարունակության համար հանդես գալ Հայկական հարցի վերաբերյալ (Հունաստանի) արտաքին գործոց նախարարության իր վերակացուներին ուղղված մի շարք զեկույցներով⁴¹: Սակայն, ինչպես երևում է, ոչ Մավրոզորդատոսի փաստաթղթերը, ոչ էլ մի քանի տարի անց կատարված որևէ նման այլ գործողություն (երբ պայթեցին և այլ, շատ ավելի դրամատիկական, իրադարձություններ), հունական կառավարություններում անհրաժեշտ արձագանք չգտան: Աթենքի վիատական դիրքը չպետք է վերագրել նրա անկարողությանը՝ զբաղվելու մի հիմնախնդրով, որն առանց էական արդյունք-

ների հոգնատանջ էր արել անգամ Եվրոպայի հզոր տերություններին: Նման դիրքորոշումը պետք է բացատրվի հաշվի առնելով հունական շահերի համար բացասական և այլ պատճառներ: Եվ դա վերաբերում է ինչքան ազգային կենտրոնին, այնքան էլ սուլթանին հպատակ ուղղափառ հույների ղեկավարությանը: Տիեզերական պատրիարքարանի, որոշ չափով նաև Աթենքի արտաքին քաղաքականության արտահայտողների վրա բացասաբար էր ազդում նաև այն մերձեցումը, որը 1870-ական թվականներին հաջողությամբ էր պսակվել հայրենասեր հայերի և բուլղարների միջև: Ղեռ ավելին, ճգնաժամի սկզբից, հատկապես Batak-ի ջարդերից (1876 թ.) հետո, Այսրկովկասի հայկական մամուլը ծնավորում էր, անգամ առանց ցարական գրաքննությունից վախի, բուլղար ժողովրդի և Բալկանների սլավոնական այլ ժողովուրդների հանդեպ համակրանքի մթնոլորտ⁴²: Այդ մերձեցման առաջին արտացոլումները մտավորական բժիշկ Մինաս Ս. Թուրունջյանի բուլղարամետ հրապարակումներն են (նա 1872 թ. փախուստի դիմեց և մշտական բնակություն հաստատեց Բուլղարիայում), ապա և Մկրտիչ Փորթուզայանի (1848-1921 թթ.) հայկական հեղափոխական «Արմենական» կուսակցության գաղափարախոսի⁴³:

Հունական կասկածամտությունն առավել խորացավ, երբ հայ-բուլղարական մերձեցումը զուգակցվեց Մակեդոնիայի վրա Սոֆիայի ունեցած նպատակներին: Այդ բանն սկզբում հայտնի դարձավ Բորիս Սարաֆովի (1872-1907 թթ.) բուլղարական «Ներքին մակեդոնական հեղափոխական կազմակերպության» (VMRO) և «Ղաշնակցության» միջև առկա համաձայնություններից: Սիմոն Տաթևի նախագահությամբ երկու կազմակերպությունների համատեղ կոնֆերանսները, դեռ ավելին, բուլղարական հողի վրա հայ պարտիզանների ռազմական ուսուցումը⁴⁴, շատ լուրջ հանգամանքներ էին, որոնք հունական կողմն անտեսել չէր կարող: Ինչպես ստորև կտեսնենք, նման մերձեցումը ոչ սակավ տարիներ, հայկական ապստամբական շարժման նկատմամբ զոնե հունական մամուլի վրա, բացասաբար ազդեց: Անհանգստությունը հնարավոր այն հետևանքների համար, որ կարող էր ունենալ Հայկական (հարցի) դիվանագիտական առնչությունը Մակեդոնական խնդրի հետ մի հանգամանք էր, որը միայն բացասական տրամադրվածություն էր ստեղծում: Ընդ որում, հույների համար ան-

հասկանալի էր որոշ համազգային հայասիրական կազմակերպությունների (ինչպես օրինակ Լոնդոնի “Anglo-Armenian Committee” կամ ֆրանսիացի սոցիալիստների “Ligue des Droits de l’Homme” կեցվածքը, երբ նրանք, չնայած իրենց հակառուսակա-նությանը, Մակեդոնական հարցում հանդես էին գալիս ի պաշտպանություն բուլղարական դիրքերի⁴⁵: Անգամ նրանք, ովքեր տարբեր ժամանակներում համագործակցում էին օսմանյան Արևելքի կամ Բալկանների վերաբերյալ ֆեդերալիստական շարժումներում, ինչպես օրինակ Պավլոս Արզիրիադիսը (1849-1901 թթ.), չի երևում, որ այդ շարժումներին մասնակցում էին ամենայն հավանականությամբ իրենց կազմակերպիչների միջև առկա գաղափարական տարակարծության պատճառով⁴⁶: Համենայն-դեպս, Աթենքը լավ աչքով չէր նայում Մակեդոնիայում «բարեփոխումների» մասին Սոֆիայի և հայերի «հայկական վիլայեթներում» նմանատիպ ինքնավարական բարեփոխումների վերաբերյալ: «զուգահիշյաժ պահանջներին: Սակայն այդ նախագծերը, հատկապես երբ զուգորդվում էին նաև արտաքին միջամտություններով, հակազդեցություն էին առաջացնում Մակեդոնիայի ու Թրակիայի ղեկավար խմբերում, առավել ևս՝ օսմանյան մայրաքաղաքի, ովքեր չէին թաքցնում «սլավոնական ագրեսիայի» հանդեպ իրենց հոգեկան հույզերը: Պատահական չէ, որ անգամ 1895 թ. օգոստոսին, երբ հայոց հանդեպ կիրառված հալածանքները հասել էին գագաթնակետին, պետական պաշտոններ վարող մի քանի ֆանարիոտ հույներ եվրոպական կառավարությունների հայասիրական և բուլղարասիրական նախածեռնությունները բնորոշում էին որպես «համաճարակ»:

«Բարեկամ նոր նախարարը (1895 թ. օգոստոսին գրում է Ստեֆանոս Կ. Կարաթեոդորիսը) Ղռան դեսպանը Բոյուսելում, մի գերազանց անձնավորություն, բայց, ինչպես բոլոր երիտասարդները, դատարկ ջերմեռանդությամբ, հեռագրերով և շրջաբերականներով օրավուր ռմբակոծում էր մեզ, հայաբուլղար անիծյալ համաճարակի պատճառով, որից դեռ ամիսներ առաջ սկսած տառապում ենք բոլորս, և որն արդեն դարձել է անստանելի...»⁴⁷:

Մյուս հանգամանքը, որն իրոք ազդում էր հայոց նկատմամբ հունական քաղաքականությանը, անկասկած, հայ-թուրքական հարաբերություններն էին: Քանի դեռ դրանք լարված էին, հայկա-

կան ազգային շարժումը համակրանքով էր դիմավորվում: Սակայն երբ Աթենքը հետամտում էր (օրինակի համար 1880-ականներին) Բարձր դռան հետ գլուխ բերել խաղաղ մի *modus vivendi*, հայկական ապստամբական նախաձեռնությունների հանդեպ հունական պաշտոնական դիրքը դառնում էր զգուշավոր, եթե ոչ թշնամական: Եվ դա այն պատճառով, որ հույները չէին ցանկանում «Արևելքի» քաղաքական քարտեզի վրա «վաղաժամ և անժամանակ» տակնուվրայություններ, քանի դեռ հունական թագավորությունը չէր հասել պետական մեքենայի նորացմանը, նրա տնտեսական և ռազմական վերակառուցմանը: Դա հունական կառավարությունների մարտավարությունում գործեց նաև 1891-1897 թթ. ընթացքում, ինչը վերաբերում է նաև Աթենքում Հնչակ կուսակցության ներկայությանը և նրա հակաթուրքական գործունեությանը: Նման դիրքավորումը նկատելի է զուսպ և իրապաշտ Խարիլայոս Տրիկուպիսի (1832-1896 թթ.) վարչապետական երկու վերջին պաշտոնավարությունների (1886 թ. մայիս - 1890 թ., 1893 թ. հոկտեմբեր - 1895 թ. հունվար), ժամանակ, անգամ նաև հայտնի հայասեր (թեկուզև հռետորակա՞) Թեոդորոս Դելիյաննիսի (1824-1905 թթ.) երկրորդ (1890 թ. հոկտեմբեր-1892 թ. փետրվար), և ճակատագրական երրորդ վարչապետության (1895 թ. մայիս - 1897 թ. մայիս) ժամանակ⁴⁸:

Համենայնդեպս, քաղաքական այս գործիչներից բացի, չպետք է մոռանալ նաև հունա-հայկական դարավոր հակամարտությունները, Քրիստոսի գերեզմանի կամ դրա սրբազան շինությունների մի քանի քառակուսի մետր կառույցների վրա առաջնություն ունենալու շուրջ գժտությունները (անգամ հայերի համար այնքան տազնապալից 1890-ական թվականներին), բայց էլ ավելի շատ՝ օսմանյան պետության որոշ կենտրոններում, հատկապես Կոստանդնուպոլսում և Տրապիզոնում երկու ազգությունների միջև առկա տնտեսական հակամարտությունը: Թեև այդ բացահայտ կամ ծածուկ ներհակություններն ազդում էին եկեղեցական և ավելի բարձր տնտեսական շրջանակների ու հասարակական խավերի լոկ մի մասի վրա, այդուհանդերձ, հին նախապաշարուններն ու հակակրությունը, որոնք առանձին ժամանակաշրջաններում ազդում էին Օսմանյան կայսրությունում Հունաստանի թագավորության հյուպատոսական և դիվանագիտական ներկայացուցիչների

վրա, շարունակվում էին անգամ ճգնաժամային 1890-ական թվականներին: Վերոհիշյալ ներկայացուցիչներն էլ Աթենք հղած հաշվետվություններով եղանակ էին ստեղծում այն բացասական հեռանկարների մասին, որ հունական շահերի համար կարող է ունենալ հայոց քաղաքական անկախությունն «Արևելքում»⁴⁹:

Հակառակ այդ բոլորի, և՛ հայկական, և՛ կրետական հարցի «հայտանշական» պայթյունը չէր կարող չներծեցնել երկու շարժումների մի քանի ղեկավար անդամների: Պահպանված չնչին տեղեկությունները (որոնց, թող նշվի, տեղյակ էին նաև հունական իշխանությունները), վկայում են համապատասխան «կոմիտեների» համագործակցության ու նրանց գործողությունների ներդաշնակ ծրագրավորման մասին⁵⁰: Հարկավ, նաև մի քանի, առավելապես ոչ հստակ վկայություններ ունենք մակեդոնական խնդրի շուրջ հույն-հայկական համագործակցության մասին (այս անգամ՝ առանց հունական իշխանությունների հավանության)⁵¹: Տվյալ ներծեցումը հաստատ պետք է բացատրվի իրական ազդեցությամբ, որ ունեին (թեկուզ և շրջանային մակարդակով) այն զգայական պատճառները, որոնք ողջունում էին օսմանցիների դեմ ուղղված ամեն մի գործողություն համակրոն մարդկանց կողմից: Ղա դրսևորվեց գլխավորապես այն բացահայտ հանդուրժողականությամբ, որն Ատտիկայի ոստիկանական իշխանությունները (բացահայտ կամ ծածուկ) ցուցաբերում էին հունական հասարակության մի նշանակալից մասի և հայ հայրենասերների հակաթուրքական համագործակցումը՝ հենց 1890-ականի այն աղետալի տասնամյակում: Այդուհանդերձ, վստահ եմ, որ նման հանդուրժողականության պատճառը հունական մայրաքաղաքում տիրող այն տպավորությունն էր, թե Մեծ Բրիտանիան (որը հաստատ ազդում էր հունական քաղաքականության վրա), համակրանքով էր վերաբերվում կամ էլ պաշտպանում հայկական խնդիրը: Գոնե հունական թերթերն իրենց հայասիրական հրապարակումների մեծ մասը քաղում էին անգլիական մամուլից, կամ էլ Բրիտանիայի երևելի անձնավորությունների հայտարարություններից (օրինակի համար W. E. Gladstone-ի՝ 1809-1898 թթ.), անձնավորություններ, որոնք հայտնի լինելով իրենց հունասիրությամբ, միաժամանակ հատուկ ջերմությամբ էին արտահայտվում նաև հայոց օգտին⁵²:

Հայոց ազգային շարժման հանդեպ հունական հակասական քաղաքականությունը նկատելի է անգամ 20-րդ դարանցումից հետո էլ: 1905 թ. օգոստոսին, երբ Հունաստանը միաժամանակ ուներ երկու բաց ճակատ, մեկը՝ Մակեդոնիայում (բուլղարների հետ), մյուսը Կրետեում (օսմանցիների հետ)⁵³, Դիմիտրիոս Ռալլիսի (1844-1921 թթ.) դյուրաբեկ կառավարությունը (1905թ. հունիս-դեկտեմբեր), դեմ առ դեմ՝ կանգնեց ներքին մի լուրջ ճգնաժամի՝ *Ղաշնակցություն* կուսակցության անդամների կողմից Մարսելից Պիրեոս փոխադրված պայթուցիկների, ռումբերի ու զենքի, ինչն այնուհետև պիտի ուղարկվեր Ջնյուռնիա և Փոքր Ասիայի խորքեր հայտնաբերմանը: Ինչպես և պետք էր սպասել, իշխանությունները նման հայտնաբերումն առաջացրած մեծ աղմուկից, ապա և Բարձր դռան հեղձուցիչ ճնշումներից անհանգստացած (արդեն Ջնյուռնիայում էլ էր հայտնաբերվել պայթուցիկների համապատասխան քանակություն)⁵⁴, ձեռնարկեցին Ատտիկայի այն ժամանակ գոյություն ունեցած փոքրիկ հայ համայնքի գրեթե բոլոր հայերի ձերբակալությունը: Այդուհանդերձ, հայտնի ազատամիտ անձնավորությունների և Աթենքում համիդյան բռնապետության այլ հակառակորդների բարյացակամ միջամտությունը հանգեցրեց նրան, որ բոլոր մեղադրյալները, «անարխիստներն» ու «բուլղար կոմիտաջիների գործակիցները» (ինչպես սկզբնական շրջանում նրանց բնորոշում էր հունական մամուլի մեծ մասը), հայտարարվեցին «ազատության նահատակներ»: Եվ 1905 թ. դեկտեմբերի 3-4-ը մի կարճատև դատավարությունից հետո Լամիայի քրեական դատարանը մեծ հանդիսավորությամբ նրանց արդարացրեց⁵⁵:

Տվյալ խնդրում հունական հակազդեցությունների կարկանդությունը երևում է նաև մամուլի գրաված դիրքում: Սկզբնական շրջանում Աթենքի լրագրերից շատերն ընդունեցին բացահայտ թշնամական դիրք, կոշտուկոպիտ փաստարկումներով հայերին հայտարարեցին բուլղարների, անգամ ռումինացիների գործակիցներ (հունա-ռումինական հարաբերություններն այն ժամանակ Կուցովլախական հարցի պատճառով վատացել էին)⁵⁶: Առանձին թերթեր հասան փաստելու այն աստիճանին, թե իբր պայթուցիկնե-

րը նախատեսվում էին Աթենքում՝ Ազգային ժողովում, թագավորական պալատում, անգամ Պարթենոնում իրականացվելիք տպավորիչ ահաբեկչությունների համար: Հակահայ մամուլն էլ առանձին դիպվածների առիթ տվեց՝ ի վնաս Ատտիկայի անմեղ հայերի⁵⁷: Դրան զուգահեռ, իր չափազանցումների պատճառով երևույթը սնուցեց ժամանակի երգիծանքը⁵⁸: Անգամ այն թերթերը, որոնք ձեռնարկեցին վերլուծել Հայկական հարցը (որպես կանոն, մակերեսային փաստարկումներով), անվարան դատապարտում էին հայկական ազգային շարժումը⁵⁹: Օրինակի համար «*Էմբրոս*» լուրջ թերթի օգոստոսի 25-ի համարում առաջին էջի «Հունաստանի քաղաքականությունը Հայկական հարցում» խորագրով սուր հոդվածի հեղինակը, որը նախկինում խստագույնս քննադատում էր ոստիկանությանն այն բանի համար, որ վերջինս չէր կռահել, թե «Աթենքում վաղուց էին ամբողջ գործարաններ և դինամիտի պահեստներ էին տեղադրված», այժմ իշխանությունների առաջ բացահայտում էր «հայ-բուլղարական անարխիզմի» կործանարար ուղղվածությունը, որպեսզի հանգի այն եզրակացության, թե Հունաստանում այդ ժամանակ պետք է պաշտպանի «Թուրքիայի հունական բնակչության անմիջական շահերը, անդորրն ու կարգուկանոնը», հուսաբեկ անի Բարձր դռան դեմ ուղղված ամեն մի գործողություն, *քանի որ տվյալ պահին թուրքական կայսրության տարածական նվազումն ու վնասը հունական շահերին լրջագույն վնաս է*⁶⁰:

Այդուհանդերձ, այլ թերթեր, ինչպես օրինակ «Ակրոպոլիսը», «Աստին», «Մակեդոնիան», հատկապես «Էստիան», (որը նախորդ տասնամյակում ճանաչվել էր որպես Աթենքի ընդգծված հայասիրական թերթ)⁶¹, հանդես էին գալիս հայերի օգտին, նրանց գործողությունները համարելով իրենց հանդեպ ցուցաբերվող ճնշումների և Աբդուլ Համիդի վարչակարգի կողմից վերջերս տեղի ունեցած ջարդերի ակնկալելի հակազդեցություն: Դեռ ավելին, նրանք կշտամբում էին հունական կառավարությանը՝ դատաքննությունների ժամանակ թուրքական դրոշիչ միջամտությունները հանդուրժելու համար: Այդ պատճառով և խնդրի բարեհաջող ավարտից հետո փառավորեցին Լամիայի քաղաքացիներին ու դատավորներին:

Քանի որ ամբաստանյալներն Աթենքում կենտրոնացրել էին պայթուցիկ նյութերի ծավալներ և խռովություն էին նախապատրաստում, որի միակ նպատակն իրենց հայրենիքի ազատագրումն էր, անհրաժեշտ էր նրանց հանդիսավորությամբ արդարացնել, քանզի դատվում էին մի երկրում, որը դեռ շարունակում էր շատ նման պայքարի մեջ գտնվել:... Սխալը միայն ու միայն հետապնդման ոստիկանական հատուկ ծառայությունների չափազանց մեծ եռանդն էր, նաև ոստիկանությանը վերաբերող գործերում օտարների միջամտության մանրամասնությունները, ինչը վնաս ու աղետ բերեցին հայկական գաղափարի իրականացման նախաձեռնողների թուրքիայում գտնվող ընտանիքներին⁶²:

Չեմ կարծում, որ հայերի համախառն այս խնդրի դրական զարգացումն ի վերջո նշանակում էր Աթենքի հայկական քաղաքականության որևէ փոփոխություն: Բացի այդ, հունական կառավարություններն այն ժամանակ արտակարգ կարճ կյանք ունեին, որպեսզի արտաքին քաղաքականության մեջ տպավորիչ փոփոխություններ ձեռնարկեին: Ուլլիին, որը 1905 թ. նոյեմբերի 30-ին վեց ամսվա վարչապետությունից հետո հրաժարական տվեց, փոխարինեց Գեորգիոս Թեոտոկիսը (1844-1916 թթ.), իր չորրորդ, նույնքան թույլ կառավարությամբ (1905 թ. դեկտեմբեր - 1909 թ. հունիս): Ամենայն հավանականությամբ, իշխանությունները հունական մայրաքաղաքի լիբերալ շրջանակների ճնշման տակ, որոնք հավատացած էին, որ համիդյան բռնապետության բոլոր հակառակորդները պետք է իրենց ուժերը միացնեն⁶³, որոշակիորեն ստիպվեցին տեղի տալ: Բացի այդ, նման տրամադրություն էր տիրում նաև Ատտիկայում: 1905 թ. սեպտեմբերին հայ ապստամբներին հղած իր գրավոր հանձնարարականում երիտթուրքերի ազատամիտ խմբի գաղափարների արտահայտիչ իշխան Sabaheddin-ը (1877-1948 թթ.), անդրադարձավ նաև Պիրեայի և Ջմյուռնիայի դեպքերին, որոնք նա վերագրում էր հուսահատ հայ հայրենասերների (իր կարծիքով, անիրականանալի) գործողություններին՝ իրենց խնդրում հասնելու մեծ տերությունների միջամտությանը⁶⁴:

Բացի այդ, հայերը ևս, երբ երիտթուրքերն ու նրանց կուսակցությունը (*Ittihad ve Teraki*) անցան իշխանության գլուխ, դադարեցրին իրենց հակաթուրքական գործունեությունը: Անգամ *Ղաշնակցությունը*, այն ժամանակվա ամենահզոր հեղափոխական կազմա-

կերպությունը (որը կազմակերպել էր նաև Պիրեայի միջոցով զենքերի առաքումը Ջնյուռնիա), շտապեց համագործակցել շատ բան խոստացող նոր վարչակարգի հետ, և այդ դիրքն էական փոփոխություն չկրեց անգամ 1909 թ. ապրիլին Ադանայում հայերի արյունալի ջարդերից հետո⁶⁵: Համենայնդեպս, հայ-թուրքական համագործակցությունն առաջացնում էր հունական կողմի կասկածամտությունը, ինչը, սակայն, Կիլիկիայի հույներին չխանգարեց իրենց հայ համաերկրացիներին սատարել նրանց փորձությունների ժամանակ: Սակայն հունական կողմն էլ այդ դեպքերի ժամանակ ունեցավ իր գոհերը⁶⁶: Հենց հույնի՝ երիտթուրքական շարժման մի աքսորյալ հին համագործչի է պատկանում հալածանքների բարոյական կազմակերպիչների դեմ առաջին միջազգային բողոքը⁶⁷:

Այդ ընթացքում երիտթուրքերի նկատմամբ հունական պաշտոնական քաղաքականությունն առավել թշնամական դարձավ⁶⁸: Արդեն 1909 թ. վերջերին Աթենքն սկսեց սուլթանի հույն հպատակներին անուղղակիորեն հորդորել մերձենալու Օսմանյան կայսրության մյուս, ոչ թուրք ազգություններին: Հենց 1910 թ. հոկտեմբերից սկսած և 1911 թ. ամբողջ ընթացքում հայ-հունական մերձեցումն առավել ևս հրամայական դարձավ, ինչը դրսևորվեց խաղաղասիրական տարբեր նախածեռնություններով, այն է՝ Բարձր դռանը երկու պատրիարքարանների ուղղած թունդ բողոքներով (այն է երիտթուրքերի ձեռնարկած զինակոչի, ուսումնական և այլ քայլերի վերացման վերաբերյալ, քայլեր, որոնք վերացնում էին millet-ների ավանդական արտոնությունները⁶⁹, նաև Կոստանդնուպոլսում (1911 թ. դեկտեմբերի 23/1912 թ. հունվարի 5) հունական նախածեռնությամբ հատուկ ֆրանսերեն օրաթերթում (*Tribune des Nationalites*) կայսրության ազգությունների իրավունքների մասին հրապարակմամբ, երկու ժողովուրդների քաղաքական ներկայացուցիչների հունական «Քաղաքական ընկերության» շուրջ համախմբմամբ, ապա և օսմանյան պառլամենտում հույն և հայ պատգամավորների ելույթների ներդաշնակմամբ⁷⁰: Տրամադրության նման փոփոխման ապացույցը հունական գաղտնի «Կոստանդնուպոլսի կազմակերպության» հրապարակած շրջաբերականն էր, որում հույներին ցուցումներ էին տրվում հրաժարվելու հայերի հանդեպ ունեցած հնամենի կասկածամտությունից և ջա-

նալ միավորելու իրենց ուժերը: Օրինակի համար, «*Կոստանդնուպոլսի կազմակերպության*» առանձին բաժինների գլխավորներին ուղղված 1912 թ. հոկտեմբերի 30-ի թիվ 3 շրջաբերականն ընդգծում էր, որ «*Հայոց ազգը, որին սլավոնները սպառնում են ծուլել Ասիայում, իսկ թուրքերն էլ, թեև ջարդում են Ասիայում, բայց հանդուրժում են, երբ ցանկանում են Եվրոպայում այն որպես գործիք օգտագործել, միայն ի դեմս հունական ազգի, որի հետ չունի որևէ ազգային շահախնդրություն, կարող է գտնել բարեկամներ և դաշնակիցներ, եթե ուզում է փրկել իր ազգային դեմքը*»⁷¹:

Մյուս կողմից, հայկական հեղափոխական «*Հնչակ*» կուսակցությունը, որը, ինչպես ասվեց, Աթենքի հետ սերտ կապեր ուներ, Ռումինիայի Կոստանցա քաղաքում 1913 թ. սեպտեմբերին կայացած իր յոթերորդ համագումարում նույնպես որոշեց ձգտել իր գործունեությունը համաձայնեցնել ալբանական, արաբական և հունական ազգային համապատասխան կազմակերպությունների հետ⁷²:

Այդուհանդերձ, առավելապես տկար այդ շարժումները սահմանափակվեցին սոսկ անմիջական խնդիրների դիմագրավմամբ, առանց նկատի ունենալու գալիք փոթորիկների առջև ավելի հզոր համագործակցության անհրաժեշտությունը: Բացի այդ, հայկական կողմի նկատմամբ հույների «բացումը» բավականին կանխամտածված էր թերևս այն պատճառով, որ հայերը շարունակում էին իրենց սերտ համագործակցությունը բուլղարների հետ: Արդեն հարյուրավոր հայեր սկսել էին ծառայել բուլղարական բանակում, որի հետ համագործակցեցին նաև Բալկանյան առաջին պատերազմում (1912 թ. հոկտեմբեր - 1913 թ. մայիս)⁷³: Բայց և այնպես հայ կամավորները (230 հոգուց բաղկացած մի գորամաս) իրենց հրամանատար Անդրանիկ Թորոս Օզանյանի, հետագայում հայտնի որպես «գորավար Անդրանիկ» (1865- 1927 թթ.) նախածեռնությամբ հրաժարվեցին բուլղարներին զինակցել նաև Բալկանյան երկրորդ պատերազմում (1913 թ. 16 հունիս - 18 հուլիս) և կռվել ընդդեմ իրենց կրոնակից հույների ու սերբերի⁷⁴:

Ի վերջո, 1913 թվականից սկսած, հունա-հայկական քաղաքական համագործակցությունն որոշակիորեն ավելի հաստատուն բնույթ ստացավ նաև էլեֆթերիոս Վենիզելոսի (1863-1936 թթ.) Հունաստանը կառավարելու ժամանակներում: Խնդրո առարկա զարգացումը պետք է առնչվի հունա-թուրքական հարաբերություններ-

րի սրմանը, որն սկսվեց [թուրքական կողմի հետ] արևելյան էգեականի կղզիների վրա հունական գերիշխանության մասին տարակարծության շուրջ: Ահա այդ ժամանակվանից սկսած, երիտթուրքերն սկսեցին Արևելյան Թրակիայից և Հունիայի ափերից հույն բնակչություն տեղահանել Փոքր Ասիայի խորքերը⁷⁵: Դեպքերին ժամանակակից դիտորդների համար արդեն պարզ էր, որ երիտթուրքերի վարչակարգը կանխորոշել է ամեն գնով կայսրության փութեռանդ թուրքացումը: Հայոց ցեղասպանության ընթացքում դա խոստովանում էին անգամ շարժման ղեկավարները: Ուստի, հույների և հայերի հալածանքները, չնայած քանակական տարբերություններին, նույն քաղաքական դրամի երկու երեսն էին⁷⁶:

Այդուհանդերձ, երկու ազգությունները (ինքնապաշտպանության ակնառու իրական անողոք անհրաժեշտության, արտաքին օգնության բացակայության պայմաններում) մեկ անգամ ևս չկարողացան համագործակցված հանդես գալ, այնպես, ինչպես դա եղավ 1913-1914 թթ. հույների տեղահանությունների ու հայոց 1915-1916 թթ. ցեղասպանության, ապա և 1916-1922 թթ. Պոնտոսի հույների արյունահեղ հալածանքների ընթացքում⁷⁷: Օսմանյան կառավարություններն օգտագործեցին արտասահմանից միջատությունների պակասը (մի քանի հույն դիվանագիտական և հյուպատոսական ներկայացուցիչների բողոքները սահմանափակ էին և միանգամայն ապարդյուն), ապա և իրենց տիրապետության տակ գտնվող երկու ճնշված ազգությունների համայնքային և հասարակական հիվանդագին հոգեբանական վիճակը:

Համենայնդեպս, հայոց ցեղասպանության ընթացքում պակաս չէր նաև հույն անվանի եկեղեցական գործիչների ռեակցիան, ինչպես օրինակ 1913-1921 թթ. Տրապիզոնի մետրոպոլիտ Խրիստանթոս Ֆիլիպպիդիսի (1881-1949 թթ.), ոչ էլ առանձին անհատների անձնագոհությունը, ովքեր հանդգնեցին հայերի հանդեպ համերաշխ լինել, շատ հաճախ անգամ կիսելով նրանց ձակատագիրը: Սակայն այդ դեպքերը (որոնցից մի քանիսը հույների և հայերի անձնական հուշերում գրի առնվեցին), ազգային կենտրոնի ցուցումով տեղի չունեցան. դրանք անձնական մոտեցումներ էին⁷⁸: Բացի այդ, 1916 թվականից մինչև 1918 թ. բարձր մակարդակի և ոչ մի համագործակցություն հնարավոր չէր. Կոստանդնուպոլսի Հայոց պատրիարքարանը Ջավեն Ա պատրիարքի (1913-

1922 թթ.) աքսորից (1916-1919 թթ.) հետո փաստորեն փակվել էր, և Տիեզերականը, որը 1913-1918 թթ. գլխավորում էր զառամյալ ու հիվանդ Գերմանոս Ե-ը (1835-1920 թթ.) ըստ էության չհայտարարված պաշարման պայմաններում փորձում էր վերապրել⁷⁹։

Ի վերջո, հունա-հայկական համագործակցությունը քաղաքական և հասարակական հարթության վրա իրականություն պիտի դառնար Մուդրոսի համաձայնության (1918 թ. հոկտեմբեր) կնքումից անմիջապես հետո, դեռ նախքան դաշնակիցների նավատորմի ղեկավար Բոսպոր մուտք գործելը։ Մեկ եռամսյակում տեղի ունեցավ այն, ինչ գլուխ չէր եկել կես դարի ընթացքում. այն է՝ օսմանյան Ազգային ժողովի հույն և հայ ժողովականների բացորոշ մեղադրանքն ընդդեմ երիտթուրքերի պաշտոնավոր անձանց՝ պատերազմի ընթացքում երկու ազգերի, հատկապես հայերի տեղի ունեցած հալածանքների և ջարդերի վերաբերյալ. միացյալ ծրագրեր հազարավոր որբերի և գաղթականների խնամքի մասին, Կոստանդնուպոլսի երկու պատրիարքարանների համագործակցություն և Աթենքում, Թիֆլիսում, Երևանում, Լոնդոնում ու Փարիզում դիվանագիտական մտքերի փոխանակություն։ Հայաստանի Հանրապետության արևմտյան սահմաններում միացյալ պաշտպանության կազմակերպում. երկու ազգությունների ազգային պահանջների առաջաջան և ազգային պահանջատիրության հարցերում փոխադարձ սատարմանն ուղղված հունական, հայկական և Սփյուռքի հունական ու հայկական մամուլի համագործակցություն. Տանքեր միացյալ ռազմական գործունեության ծավալելու վերաբերյալ Այսրկովկասում (1917-1919 թթ.), Պոնտոսում (1917-1918 թթ.), Կիլիկիայում (1919 թ.), Նիկոմեդիայի շրջանում (1921 թ.) և Զմյուռնիայում (1922 թ)։ Վերջապես, դիվանագիտական դաշտում փոխադարձ սատարում, Վենիզելոսի կառավարության կողմից Հայաստանի Հանրապետության ճանաչումից հետո (1919 թ. հունվարին), հույն վարչապետի կողմից Իոաննիս Ստավրիդակիսի (1892-1920 թթ.) Թիֆլիս ու Երևան ուղարկված հունական հատուկ պատգամավորություն, և երկու պաշտոնական դիվանագիտական ներկայացուցչությունների բացում՝ մեկը Իոաննիս Պապասի ղեկավարությամբ հունական՝ Երևանում, 1920 թ. սեպտեմբերին, մյուսը 1920 թ. մայիսին Տիգրան Շայան-ի (+1952 թ.) Աթենքում՝ հայկական։ Հունական ղեկավարությունը Երևանում, հարկավ, հայ-թուր-

քական պատերազմի (սեպտեմբեր-նոյեմբեր), Հայաստանի Հանրապետության անկման և դրան հաջորդած երկրի խորհրդայնացման (1920 թ. դեկտեմբեր) պատճառով չհասցրեց գործել⁸⁰: Դրան հակառակ, Հայաստանի Հանրապետության դիվանագիտական ներկայացուցչությունն Աթենքում շարունակում էր գործել. սկզբնական շրջանում, ինչպես ստորև կտեսնենք, Chayan-ի գլխավորությամբ (մինչև 1923 թ. ապրիլ), և մոտ երկու տարի ևս դեսպանի ժամանակավոր պարտականությունների կատարող (chargé d'affaires) մինչ այդ հյուպատոս (և երկար տարիներ Ատտիկայի հայկական համայնքի նախագահ) Հարություն Կլեջյանի: Նույն ժամանակաշրջանում Սալոնիկում բազում տարիներ որպես Հայաստանի հյուպատոս ծառայեց բժիշկ Գալուստ Ասլանյանը (1868-1932 թթ.)⁸¹:

Այս բոլոր նախաձեռնությունները (որոնք ունեին էլեֆթերիոս Վենիզելոսի հավանությունը, եթե ոչ քաջալերումը)⁸², առաջին անգամը լինելով, ընգծում են հունական արտաքին քաղաքականության պլանավորման մեջ հայկական գործոնի բարձրացումը, և դրա անցումը ստատիկ վիճակից դինամիկի ու բազմաձևակատայինից բացվածքներով աշխարհաքաղաքական ավելի լայն դաշտերի⁸³: Այս իրողությունը կրետացի քաղաքական գործչի (Վենիզելոսի) հակառակորդներին չխանգարեց իր իշխանությունից անկումից (1920 թ. նոյեմբերի վերջ) անմիջապես հետո նրան մեղադրելու միանգամայն հակառակ բանում, որ նա ինչ որ չափով պատասխանատու էր Հայաստանի կործանման համար, քանզի, ինչպես գրում է *Կաթմեդրիսի* թերթի 1920 թ. դեկտեմբերի 1-ի համարի խմբագրականի հեղինակը, մեկնաբանելով առաջխաղացող քենալական ուժերի կողմից թույլ Հայաստանի Հանրապետության ոչնչացումը (հոկտեմբեր-նոյեմբեր) «Կոնֆերանսում հունական հարցը տնօրինողը» (Վենիզելոսը), չպաշտպանեց Պոնտոսի վրա հունական գերիշխանության տարածումը, որ նա Հայաստանի կործանման համար էլ է մեղավոր:

Աշխարհի հետնամասում, թուրքերի ու քրդերի միջև լքված Հայաստանը բախտ չունեցած գտնվելու այն շառավիղից հեռու, որպեսզի դաշնակիցները կարողանան օգնության ձեռք մեկնել, Մուստաֆա Բենալին անձնատուր եղավ, ենթարկվեց թրքության... Հայաստանը զրկվեց եվրոպական աշխարհի հետ որևէ շփում

ունենալու հնարավորությունից, ինչը պիտի նպաստեր նրա փրկությանն ու հույների բարօրությանը, եթե կոնֆերանսում հույն ներկայացուցիչը պահանջեր և գլուխ բերեր հարևան հունական Պոնտոսի վրա հունական պետության արդարացի ընդարձակումը: Դժբախտաբար, կոնֆերանսում հունական խնդիրը վարողը չպահանջեց, դաշնակիցներն էլ, ինչպես սպասելի էր, չհանդգնեցին պնդել, որ հունական Պոնտոսը Հունաստան դառնա, ինչի դեպքում պիտի փրկվեր նաև Հայաստանը՝ իր քրիստոնյա, հզոր պաշտպանի շնորհիվ: Հայաստանն այսօր ստրկացվում է, Պոնտոսը վտանգվում: Հունաստանը հունական ձակատի վրա ջարդելով՝ քենալիզմը միայնակ պիտի կարողանար վերստին փրկել Հայաստանը»⁸⁴: Այնուամենայնիվ, Վենիզելոսի դեմ ուղղված խակամիտ փաստարկումից բացի, հայ-հունական ռազմական համագործակցության ուղղությամբ նրան փոխարինողների կողմից մի քանի լուրջ ջանքեր գործադրեցին: Բայց, ինչպես մի քիչ հետո, դրանք կատարվեցին ուշացած, այն էլ տեղական մակարդակի վրա: Ավելի ևս ուշացած ու կարկամած էին հույն-քրդական համագործակցությանն ուղղված շարժումները: Դրանք տեղի ունեցան Կոստանդնուպոլսում և Ջնյուռնիայում հունական ռազմական անկման նախօրեին և ըստ երևույթին վերաբերում էին քենալական ուժերի թիկունքում դիվերսիոն փոքր ձակատների ստեղծմանը⁸⁵:

Ոչ հույն-հայկական համագործակցությունը, ոչ էլ հույն-քրդական սաղմնային մերձեցումը, իհարկե, էական արդյունքներ չունեցան: Հույների հայերի հետ համագործակցության վերջնական անհաջողությունների պատճառները պետք է փնտրել նախ և առաջ այն անելանելի դրության մեջ, որում երկու ժողովուրդները գտնվում էին գրեթե բոլոր ձակատներում, մասնավորապես ռազմական (հատկապես երբ նրանց լքեցին այն ժամանակվա դաշնակիցները): Սկզբնական շրջանում ամենաշատ խնդիրները ծագում էին Կովկասում, երբ մի քանի օրվա ընթացքում իրավիճակի անընդմեջ փոփոխությունները, ավելի շատ խաբուսիկ լավատեսությունն ու միանգամայն անհիմն գերլավատեսությունը դառնում էին խուճապ ու հուսահատություն: Հունաստանում հաջորդեցին քաղաքական հեղաշրջումները և, որպես հետևանք, Հոնիայի ձակատի թուլացումը: Այդուհանդերձ, օբյեկտիվ այդ դժվարություններից բացի, հույն-հայկական «դաշնակցության» վերջնական ծա-

խողման մեջ բացասական դեր խաղաց փորձի պակասը, անգամ մի քանի անձանց քաղաքական կարճատեսությունը, ովքեր իրենց վրա վրա էին վերցրել խնդրի պլանավորումն ու իրականացումը: Խոսքը վերաբերում է հայ ղեկավարներին մի կողմից, և հունական կառավարության կողմից հատուկ նպատակով Այսրկովկաս ուղարկվող սովորական և արտակարգ պաշտոնյաներին՝ մյուս կողմից: Բացի այդ, հակառակ հենց Վենիգելուսի և ինչ որ չափով՝ նաև նման պաշտոն վարած Ալեքսանդր Խատիսյանի (1876-1947 թթ.)⁸⁶ գործադրած համառ ջանքերին⁸⁷ գորավոր հին նախապաշարուններն ու վստահության պակասը դեռ ամբողջությամբ հաղթահարված չէին: Նույնը վերաբերում էր նաև տնտեսական հակամարտության ուրվականին, որը դեռ այն ժամանակ էլ թուվել էր երկու կողմի մարդկանց ուղեղները: Առանձին հայ ղեկավարների գայրացուցիչ աստիճանի ծայրահեղ ու ապակողմնորոշիչ պահանջները, հատկապես խաղաղության կոնֆերանսում հայկական ներկայացուցչության երկու գլխավորողներից մեկի՝ Պողոս Նուպարի (1851-1930 թթ.), ապա Պոնտոսի հունական հանրապետություն ստեղծելու ուտոպիական ջանքերի մեջ խառնված մի քանի հույների, գոնե հունա-հայկական կոնֆեդերացիա կազմելու (ինչպես ուզում էր հունական կողմը), կամ հայկական մի ֆեդերացիա, (ինչպես ցանկանում էին հայերը), նույնպես բացասական լուրջ գործոն էին: Այս բանավեճերը նույնիսկ մամուլի առարկա էին դառնում, այն էլ անգամ միանգամայն տարադեպ պայմաններում: 1921 թ. հունիսին Հայաստանի խորհրդայնացումից վեց ամիս անց և հունական ճակատի փլուզումից ընդամենը երեք ամիս առաջ «Արևելքի» խնդիրների գերազանց գիտակ Գեորգիոս Սկալիերիսը Փոքր Ասիայի ազգագրությանը նվիրված իր գրքում հայերի մասին գրում է այսպիսի սադրիչ խոսքեր.

«Հայերը պարտավոր են ու պարտական հրաժարվել իրենց հանդուգն պահանջներից և պարփակվելով իրենց ազգագրական սահմաններում, հույների հետ համաձայնության գան, նրանց հետ կազմեն արևելյան մի դաշնակցություն, որը և՛ արևելքը կփրկի, և՛ երկու ազգակից ժողովուրդների ճիշտ հասկացվող շահերն առաջ կտանի»⁸⁸:

Այդ ամենի իրադրությունը ճիշտ գնահատելու համար ազատ գործունեության դաշտ չէր թողնում, որպեսզի հույն-հայկա-

կան համագործակցության անհրաժեշտ կայուն հիմք ստեղծվի⁸⁹: Կովկասում Վենիգելուսի ոգևորված, բայց տարաբախտ ներկայացուցիչ Իոաննիս Ստավրիդակիսը⁹⁰ 1919 թ. նոյեմբերի 15/28-ին հունական կառավարությանը հղած իր ընդարձակ հուշագրում, ձիշտ է, բավականաչափ լավատեսությամբ, վերլուծեց փոքրասիական տարածքում երկու ձակատների ստեղծման, հունական զինված ուժերի Հայաստան տեղափոխման ակնհայտ անհրաժեշտությունը:

«Հունաստանի համար ներկայացված է հազվադեպ հնարավորություն: Այն ժամանակ, երբ Արևելքը զրկված է տիրոջից, Ռուսաստանը բեկված է ու գտնվում խառնաշփոթ վիճակում, ահա այդ տարածքներում միակ նշանակալից ռազմական ուժը հունականն է: Եթե նա թեկուզև մի պահ Փ.Ասիան սեղմի երկու աստամների հզոր աքցանով՝ մեկը Ջմյունիայից, մյուսը՝ Հայաստանից ... իմ կարծիքով կազմակերպման վայրը միանգամայն ընդունելի պետք է Հայաստանում լինի... Հայաստանը, ի հակադրություն (Վրաստանի) մեր նպատակի համար ներկայացնում է գրեթե բոլոր առավելությունները: Այն է. ա) ձակատում ընդհանուր թշնամի, բ) վայրը, որտեղ Փոքր Ասիան միանում է Կովկասին, գ) հունական համախումբ բնակչություն; որը կարող է օգտագործվել որպես նախանյութ, դ) հայկական կառավարության հետ հունական գորամասերի կազմավորման վերաբժրյալ ավարտվող բանակցությունները... համապատասխան հավաստիացումը չորս օր առաջ ինձ կրկնեց Հայաստանի վարչապետ պրն. Խատիսյանը»⁹¹:

Ստավրիդակիսի ծրագիրը, որն արժանացել էր նաև Պոնտոսի հույների ներկայացուցիչ, Տրապիզոնի մետրոպոլիտ (1913-1922 թթ.) Խրիսանթոս Ֆիլիպպիդիսի (1881-1949 թթ.) հավանությանը, ժամանակին չընդունվեց: Հակառակ իր նախաձեռնողների ասածներին, Խատիսյանի կառավարությունն այն ընդունեց, երբ արդեն շատ ուշ էր: Բայց բրիտանացիներն էլ շտապեցին տակը փորել⁹²: Այնուամենայնիվ, առանձին վայրերում հայկական տարբեր գորամասեր կամ համագործակցեցին փոքրասիական ձակատի հունական ռազմական միավորումների հետ, կամ էլ նրանց մաս կազմեցին, թերևս հունական արշավանքների վերջին փուլում (ինչպես, օրինակ, դա տեղի ունեցավ հունական կատարյալ փուլզումից փոքր անց՝ «գորավար» Թորգոմի «Հայկական լեգեոնի»

հետ Զմյուռնիայում⁹³: Ուստի, Փարիզում Խաղաղության կոնֆերանսում Վենիզելոսի և Հայաստանի Հանրապետության լիազոր ներկայացուցիչ Ավետիս Ահարոնյանի (1866-1948 թթ.) կողմից Սևրի պայմանագրի ստորագրումը (1920 թ. օգոստոսի 10), որը միաժամանակ արդարացնում էր և՛ հույների, և հայերի ստրկաբարո անուրջները, կրում էր ավելի խորհրդանշական, քան էական բնույթ⁹⁴: Վերջապես, նույնչափ խորհրդանշական էին 1922 թ. դեկտեմբերին Լոզանի բանակցություններում արդեն պարտված Հունաստանի մի ներկայացուցիչ՝ Վենիզելոսի, 1922 թ. նույնանուն պայմանագրում Թուրքիայում մնացած հայերի պաշտպանությանը վերաբերող միջազգային վերահսկողությունն ապահովելու ջանքերը⁹⁵: Ընդհակառակը, էական էր փոքրասիական աղետի ընթացքում և դրանից անմիջապես հետո Հունաստանում Արևելյան Թրակիայի և Արևմտյան Փոքր Ասիայի աղետալի դատարկման ժամանակ իրենց հույն համակրոններին հետևած շուրջ 80.000 հայ գաղթականների ընդունումն ու հյուրընկալումը⁹⁶:

Երբ 1920թ. սակավակյաց (28 մայիսի 1918 թ. - 1920 թ. դեկտեմբերի 4) անկախ Հայաստանի Հանրապետությունը Խորհրդային Միության մաս կազմեց, կամ անգամ 1936 թ. վերածվեց Հայաստանի Խորհրդային Սոցիալիստական Հանրապետության (<ԽՍՀ>), արտասահմանի հետ Երևանի պաշտոնական հարաբերություններն անխուսափելիորեն անցնում էին Մոսկվայի միջով: Այդուհանդերձ, հունական կառավարությունները չդադարեցին Սփյուռքի հայոց քաղաքական ղեկավարության, ավելի որոշակի այնտեղի հզոր *Ղաշնակցություն* կուսակցության հետ պահպանել գոնե ինչ որ կիսապաշտոնական շփումներ: Եվ պատահական չէ, որ սոսկ հունա-խորհրդային հարաբերությունների վերահաստատումից մեկ տարի անց՝ 1924 թ., և Մոսկվայի համառ ճնշումներից հետո պիտի դադարեցվեր Հայաստանի Հանրապետության դիվանագիտական ներկայացուցչության գործունեությունն Աթենքում⁹⁷: Իրողությունը, սակայն, հունական կառավարությանը չխանգարեց

1933 թ. մի կողմից արգելել խորհրդային Հայաստանի տարեդարձի տոնակատարությունը Հունաստանում, մյուս կողմից, հակառակ այն ժամանակվա խորհրդային դեսպան Յակով Խրիստոֆորովիչ Դավթյանի (1888-1938 թթ.) թունդ բողոքներին, թույլատրել Հայաստանի 1918 թ. անկախությանը նվիրված հանրային ցույցերը⁹⁸: Նշենք, որ այդ ցույցերին մասնակցում էին Հունաստանի տվյալ ժամանակի քաղաքական և գիտական աշխարհի նշանավոր դեմքեր: 1929 թվականին արդեն հունական բանակի սպա Թորգոմի նախաձեռնությամբ հիմնադրված և մինչև 1935 թ. գործած «Հունա-հայկական Միության»-ը գործուն մասնակցում էր անվանի հնագետ ու արվեստի պատմաբան Ալեքսանդրոս Ֆիլադելֆեսը (1867-1955 թթ.) որպես նախնազահ, և քաղաքական գործիչ ու դիվանագետ Ֆիլիպպոս Դրաղումիսը (1890-1980 թթ.) որպես գլխավոր քարտուղար⁹⁹:

Հակառակ այդ բոլորին, հայոց նկատմամբ հունական պաշտոնական մարտավարությունն այն ժամանակ անգամ հակասական էր ներկայանում: Հունաստանը, հակառակ իր տնտեսական հուսահատ վիճակին, սիրով ընդունեց Արևելյան Թրակիայի, Հունիայի և Կիլիկիայի տասնակ հազարավոր գաղթական հայերի, ցուցաբերեց այն հյուրընկալությունը, ինչպիսին բախտակից հույներին: Դեռ ավելին, Վենիզելոսը 1923 թ. նրանց զանգվածաբար հունական քաղաքացիություն շնորհեց, անկախ այն բանից, որ նրանք այն չընդունեցին, քանզի հույս ունեին վերադառնալ Թուրքիա՝ իրենց հարազատ վայրերը, և վերստին ծեռք բերել սեփական ունեցվածքը¹⁰⁰:

Մյուս կողմից, երկու պատերազմների միջև ընկած ժամանակաշրջանի հունական կառավարությունները ջանում էին կրճատել երկրի հայ բնակչությունը, դյուրացնելով նրանց գաղթն Արևմուտք, նախ և առաջ նրանց «հայրենադարձությունը» խորհրդային Հայաստան: Այս ռազմավարությունն առնչվում էր նաև տնտեսական, հասարակական և քաղաքական գործոններին: Ջգալի դեր խաղաց և այն իրողությունը, որ հայկական գաղթականական տարրի մեծամասնությունը պրոլետարական վիճակում էր, ապա ինչ որ չափով հայկական գոնե երկու կուսակցությունների գաղափարական կողմնորոշումները՝ արմատական *Հնչակի* (որը Հայաստանի խորհրդայնացումից հետո սատարեց նոր վարչակարգը), ապա և

մի ժամանակ լիբերալ *Ռամկավար ազատական* կուսակցության: Նրանք հավանություն տվեցին հունահայ երիտասարդության զգալի մասին հունական կոմունիստական շարժման հետ համագործակցելուն: Ուստի, Մոսկվայի հետ դիվանագիտական հարաբերությունների վերականգնումն Աթենքի համար դյուրացրեց Ազգերի Լիգայի համապատասխան ծառայությունների հետ միասին 1925-ին և 1929-1932 թթ. հայկական «հայրենադարձությանն» աջակցելը¹⁰¹: Բոլոր դեպքերում երևում է, որ քաղաքական հեղիեղուկության այդ ժամանակաշրջանում (հատկապես Հունաստանի ներսում), երկրի հայերից բաղկացած որոշ խմբեր, որոնք պատկանում էին *Ղաշնակցությանը*, հունական իշխանություններին առիթ էին տալիս իրենց թշնամաբար հակազդելու: Օրինակ, 1923 թ. վերջին և հաջորդ տարվա սկզբին, երբ երկրում դեռ չէր գիտակցվել Լոզանի վերջերս կայացած կոնֆերանսում կնքված պայմանագրով (1923 թ. հուլիսի 23) ձևավորված նոր իրավիճակը, Արևելյան Մակեդոնիայի և Արևմտյան Թրակիայի նահանգներում (հունա-թուրքական և հունա-բուլղարական դեռևս խախուտ հարաբերությունների պայմաններում) սկսեցին նկատվել մի քանի տասնյակ տաքարյուն հայ կամավորների ինչ որ շարժումներ, որոնք ծրագրում էին կտրել, անցնել սահմանը և Թուրքիայի ներսում գործել որպես պարտիզան¹⁰²: Այդ դեպքը, նաև ապա համակցության ինչ որ այլ խնդիրներ, որոնք նկատվել էին նորեկ գաղթականների և Թրակիայի մուսուլմանական փոքրամասնության միջև, հունական իշխանություններին առիթ տվեցին նույն տարվա վերջին Հյուսիսային Հունաստանից Ատտիկա, Պելոպոնես և Կրետե տեղահանել շուրջ 5.000 հայերի: Եվ միայն հունական ու օտար մարդասիրական շրջանակների հակազդեցությունը ստիպեց դադարեցնել նոր վայրում նրանց պարտադիր բնակություն հաստատելը¹⁰³:

Նույն և համանման պատճառներով հայկական տարրի նկատմամբ հունական քաղաքական ղեկավարության կասկածամտությունը շարունակվեց անգամ հետպատերազմյան առաջին տարիներին, և դա, հակառակ հույների կողքին հույն-իտալական պատերազմին ու Կրետեի ձակատամարտին հունահայերի մասնակցությանը¹⁰⁴: Սկզբում Արևելյան Մակեդոնիայի և Արևմտյան Թրակիայի զգալի թվով հայեր մեղադրվեցին Երկրորդ համաշ-

խարհային պատերազմի ընթացքում բուլղարների հետ համագործակցելու մեջ¹⁰⁵: Մյուս կողմից, հունական իշխանություններին հայտնի էր 1944 թ. դեկտեմբերյան իրադարձություններին մասնակցած Ատտիկայի հայկական տարրի մոտավոր թվաքանակը¹⁰⁶: Ուստի, երբ 1946-1947 թթ. սկսեց իրականանալ հայկական Սփյուռքի «ներգաղթը»¹⁰⁷ (նպատակ ունենալով վերակենդանացնել Հայկական հարցը), հունական անվտանգության իրավասու ծառայություններն ամեն կերպ խրախուսում էին երկրից շուրջ 18.000 հայերի գանգվածային հեռանալը, քանի որ նրանց մեծամասամբ համարում էին (հենց սառը և քաղաքացիական պատերազմի հրաբորբոք ժամանակ) ձախ հայացքների տեր¹⁰⁸: Սակայն Հունաստանի հայկական համայնքներում գերիշխող *Ղաշնակցություն* կուսակցությունն ամեն կերպ չէր խրախուսում ԽՍՄՄ փախուստի դիմելու ալիքը, քանզի գտնում էր, որ Խորհրդային Հայաստանում նրանց մշտական հաստատումը ոչ միայն հավաստում էր Երևանի վարչակարգի ճանաչումը, այլև առավել ևս պիտի թուլացներ Թուրքիայի հանդեպ հայկական ազգային ապագա պահանջատիրությունը¹⁰⁹: Համենայնդեպս, հայկական Սփյուռքի առանձին խմբեր, անգամ Միացյալ Նահանգներում, խաբուսիկ զգացում ունեին, որ խորհրդա-թուրքական հարաբերություններում առկա ձգնաժամը կարող է հանգեցնել 1921 թվականի համաձայնությունների վերանայումը, համաձայնություններ, որոնցով քեմալական Թուրքիան ամրագրել էր խորտակման ճամփան բռնած Հայաստանի Հանրապետությունից Արդահանի և Կարսի նահանգների պոկումը¹¹⁰:

*

*

*

1952 թ. հունա-թուրքական դաշնակցությունը (ՆԱՏՕ-ի շրջանակներում), ապա և գաղափարական ու ծայրահեղ հոգեբանական վիճակները, որոնք բնորոշ էին Հունաստանի այն ժամանակվա հայկական համայնքներին, հունական ու հայկական ազգային խնդիրների փոխադարձ մերձեցման հնարավորություն չէին տալիս: Այդուհանդերձ, 1960-ականների մեջտեղում, 1915 թ. ցե-

ղասպանության կեսդարյա լրացման առիթով, հույներն ու հայերը սկսեցին դարձյալ գնահատել իրենց ազգային խնդիրները բնորոշող զուգահեռականությունը: Մի կողմից, դա այն ժամանակաշրջանն էր, երբ սկսվեց ցեղասպանության ճանաչմանն ուղղված հայկական Սփյուռքի շարժումը (դրա հետ միասին՝ նաև Հունաստանի հայկական տարրի)¹¹, իսկ մյուս կողմից՝ 1955 թ. սեպտեմբերին Կոստանդնուպոլսի հույների, ապա նաև 1964 թ. Իմբրոս ու Տենեդոս կղզիների հույն բնակչության դեմ թուրքերի իրականացրած ջարդերից հետո հունական աշխարհում քաղաքական մթնոլորտի փոփոխությունը¹²: Նշենք, որ հիշյալ դեպքերը համընկան Մոսկվայի և Անկարայի համագործակցության ժամանակաշրջանին, ինչը Երևանի հայկական քաղաքական ու եկեղեցական դեկավարության համար բազում երկընտրանքներ ստեղծեց¹³: Այնուամենայնիվ, հույների և հայերի փոխաջակցությունը սահմանափակվեց գլխավորապես ակադեմիական շրջանակներում և հունական գաղթականական տարրի մի քանի հատվածներում, հատկապես այն տարրի, որը ծագում էր Արևելյան Թրակիայից, Փոքր Ասիայից և Պոնտոսից: Բայց և այնպես, դեպքերի նման զարգացումը նպաստեց ինչքան Հունաստանի, այնքան էլ հունական սփյուռքի՝ թուրքական ագրեսիվության բարձրացող ուրվականի առաջ հանրային կարծիքի զգացմունքայնությանը: Նման զգացմունքայնությունն առավել բացահայտ պիտի դառնա 1974 թ. թուրքերի Կիպրոս ներխուժելուց և իրենց օջախներից կիպրոսցի հույների և հայերի բռնի վտարումից հետո¹⁴: Այսպիսով, պատմական դեպքերի զուգահեռությունը թուրքական գործոնը ևս մեկ անգամ դարձրեց հույն-հայկական հարաբերությունների գործակից. դրանք վերստին եղան սերտ ու երկարատև:

Այդուհանդերձ, պաշտոնական Հունաստանի կողմից քաղաքական որոշակի քայլեր չունեցանք, այն չդադարեց երկրի Հայկական ազգային կոմիտեի գործողությունների հանդեպ լինել արտակարգ դիվանագետ: Հունական քաղաքական կուսակցությունների ներկայությունը հայոց տարեդարձային ելույթներում և ակադեմիական ու մարդասիրական տարբեր հաստատությունների ներկայացուցիչների մասնակցությունը դրանց կազմակերպմանը (երկու տվյալ, որն ինչպես երևում է, թուրքական կողմը շատ էր գերազնահատում)¹⁵, չէին վերացնում Հայկական հարցին հունական

կառավարությունների չափազանց զգուշավոր դիմակայությունը: Ազգային ժողովն անգամ պատասպարվում էր իր կանոնադրության հետևում, որպեսզի գեղեցիկ ձևով մերժի ցեղասպանության պաշտոնական ճանաչման մասին Հունաստանի Հայկական կոմիտեի պահանջը, ի հակադրություն կիպրական պառլամենտի, որը համարձակություն ունեցավ 1975 թ. ապրիլի 24-ին միաձայն (թուրքական ներխուժումից ընդամենը տասը ամիս անց) հրապարակելու հատուկ որոշում, որով պաշտոնապես ճանաչում էր հայոց ցեղասպանությունը¹¹⁶: Բայց այդ զսպվածությունը Թուրքիային չխանգարեց Աթենքին, ավելի հաճախ՝ Նիկոսիային մեղադրելու, որ նրանք, իբր 1980-ականների սկզբում, ապա և ավելի ուշ, հայկական ահաբեկչական խմբերի գործունեության հանդեպ աչք էին փակում, դեռ ավելին, թույլ էին տալիս իրենց տարածքում ապաստանելու ASALA կազմակերպության (Armenian Secret Army for the Liberation of Armenia) - «Հայաստանի ազատագրության գաղտնի բանակի» անդամներին¹¹⁷: Համենայնդեպս, հույն-հայկական (օրինակ ԱՄՆ-ի հայկական և հունական տարրի) մերձեցում կարելի է նկատել 1974 թ. հետո, որտեղ մի պահ երևաց Կոնգրեսում և State Department-ում թրքամետ lobby -ի դեմ ընդհանուր ճակատի ձևավորումը¹¹⁸:

1987 թ. ամռանը թուրքական պետության բարձրագույն իշխանավորները պիտի փորձեն Հունաստանի և Կիպրոսի վրա բարդելու 1987 թ. հունիսի 18-ին Եվրոպական պառլամենտի ընդունած հայոց ցեղասպանության վերաբերյալ Անկարայի համար արտակարգ տիաճ քվեարկությունը՝ 20-րդ դարի երկրորդ կեսին հայերի նկատմամբ քաղաքական ու բարոյական համերաշխության միջազգային կարևորագույն արարքներից մեկը¹¹⁹: Բնական է, որ բացարձակ կողմ քվեարկեցին Եվրոպառլամենտի բոլոր հույն պատգամավորները՝ անկախ Եվրոպառլամենտի համապատասխան քաղաքական մեծ խմբերի բռնած դիրքից¹²⁰: Սակայն Ստրասբուրգում Թուրքիայի դատապարտումը չպետք է վերագրել հունական դիվանագիտության հաջողություններին: Դա գլխավորապես արևմտյան կազմակերպությունների բազմամյա ջանքերի պտուղն էր, կազմակերպություններ, որոնք Անկարայի կողմից մարդու իրավունքների անվերջ խախտումների նկատմամբ շատ զգայուն էին, այդ թվում 1915 թ.¹²¹ հայոց ցեղասպանությանը վե-

րաբերող պատմական փաստերի անդադար կեղծման և տասնամյակներ շարունակ հայկական տեղական ազգային կոմիտեների հետ միասին պայքարում էին հայերի գոնե բարոյական հատուցման համար: Ուստի Եվրոպական պառլամենտի վերջնական որոշումը պետք է դասվի այն ջանքերի թվին, որոնք ինչ որ ձևով որոշակիացան Եվրոպառլամենտի առանձին պատգամավորների (նրանց թվում և մեկ հույնի), դեռ 1981 թ. գարնանից խնդիրը բարձրացնելու, հայոց օգտին որոշումներ ընդունելու բազմապիսի անդուլ ճիգերով¹²²: Իբր թե գոյություն ունեցած հայ-քուրդ-հույն «Սրբազան դաշինքի» մասին թուրքական ամբաստանություններն արվեցին այն ժամանակ, երբ որոշման վերջնական տեքստում ընդգրկվեցին Կիպրոսի գրավման, ապա և էգեյան ծովի վրա թուրքական նկրտումների և թուրքական Քրդստանում մարդու իրավունքների ոտնահարման ծեակերպումները¹²³:

Թուրքական հակազդեցությունների սրությունը պետք է վերագրել ոչ այնքան հենց հայկական և քրդական հարցին վերաբերող որոշումից բխող հետևանքներին, որքան Անկարայի երկյուղին, թե Եվրոպառլամենտի նախադեպը գուցե ճանապարհ կբացի հայերի նմանատիպ ջանքերի համար՝ ապահովելու ամերիկյան սենատի և կոնգրեսի որոշումն ապրիլի 24-ը ԱՄՆ-ում էլ հայոց 1915 թ. ցեղասպանության գոհերի հիշատակի օր հայտարարվելուն, և որ այդ փաստը, ամենայն հավանականությամբ, նմանատիպ և շղթայական ռեակցիա կառաջացնի աշխարհի այլ պառլամենտների որոշումներում¹²⁴: Բայց ավելի նշանավոր էր Եվրոպառլամենտի 2002 թ. փետրվարի 28-ի նոր որոշումը, որը, կրկնելով 1987 թ. հունիսի 18-ի թեզերը, հավելում էր Թուրքիայի Եվրոմիության անդամության թեկնածու դառնալն առնչել [հայոց] ցեղասպանությունը ճանաչելու նրա պարտավորությանը¹²⁵:

Հունաստանի ներսում և Սփյուռքում հայկական շարժումներն օրինակ հանդիսացան քաղաքական հարթության վրա առաջադրելու համանման հարց, որը մինչ այդ դուրս էր մնացել, այն է՝ 1916-1922 թթ. Պոնտոսի հույների հալածանքներն ու կոտորածները: Պոնտոսցիների առաջին ձեռքբերումը 1994 թ. փետրվարին հատուկ օրենքի միաձայն ընդունումն էր, որը մայիսի 19-ը սահմանում է Պոնտոսի հույների հիշատակի օր: Այս օրենքը երկկերպ գործելով, ի վերջո բավականին ուշացած՝ 1996 թ. ապրիլին, ճա-

զեցրին հունական երկարատև զգուշավորությունը: Հունաստանն առաջին երկրներից էր, որ 1991 թ. դեկտեմբերի 31-ին շտապեց ճանաչել Հայաստանի անկախությունը: Այդուհանդերձ, իմ կարծիքով հունական զգուշավորության արտահայտությունները դեռևս ամբողջությամբ չէին անհետացել: Երևանի հանդեպ Աթենքի արտաքին քաղաքականությունը որոշ ժամանակ կախված էր հնուց եկող ԽՍՀՄ-ի նախկին սոցիալիստական հանրապետությունների միջև առկա երեքուրեք քաղաքական «ներքին հարաբերություններից»: Գոնե միջանկյալ ժամանակաշրջանում, մինչ արևմտյան ազդեցությունը կհասներ և կհաստատվեր տարածաշրջանում, Ռուսաստանի Դաշնությունը, այն է՝ ժանրության կենտրոնը, հավասարակշռում էր Այսրկովկասում կոլեկտիվ անվտանգության բյուրեղացած համակարգի մի պակասը: Այս իրողությունը հույներին ստիպեց իրենց դիվանագիտական ավանդույթների համար անսովոր ուշադրությամբ հետևել Կրաստանի, Հայաստանի և Ադրբեջանի միջև դյուրաբեկ հավասարակշռություններին, երբ երեք հարևան երկրներն սկսեցին կտրել տասնամյակներ շարունակ իրենց Մոսկվայի հետ կապող պորտալարը: Ինչպես պիտի հետևեր, Հունաստանին հետաքրքրում էին Հայաստանին վերաբերող զարգացումները և հատկապես նրանք, որոնք բացահայտում էին Երևանի հնարավորությունները՝ հաղթահարելու իր ավելի հին խնդիրները ոչ այնքան Թիֆլիսի հետ, որքան, ամենից առաջ, Բաքվի¹²⁸: Մյուս կողմից, Ղարաբաղի (Արցախի) նկատմամբ գերիշխանության շուրջ արյունահեղ ներհակությունը թեև Հունաստանին շատ արդարացի կանգնեցրեց հայերի կողմը (թուրքերը հենց սկզբից ադրբեջանցիների կողմն էին անցել)¹²⁹, չմարեցին Աթենքի երկյուղները, որ հանկարծ չլինի, թե խնդրի կախյալ վիճակը, գոնե անուղղակիորեն, կապվի Բալկանյան «ներքին» զգայուն վիճակների հավասարակշռության սրման հետ (ինչպես, օրինակի համար, այն վիճակների, որոնք տեղի ունեցան Կոսովոյում): Կարծում եմ, որ, թերևս, հենց այնտեղ պետք է որոնվի նաև Այսրկովկասում հունական արտաքին քաղաքականության մի անհասկանալի զգուշավորություն՝ հատկապես Բաքվի հետ Երևանի հարաբերություններում¹³⁰:

Ընդ որում, պայմաններն արմատապես փոխեցին հայկական Սփյուռքի դերը՝ իրենց «երկրորդ հայրենիքների» Հայաստանի

յուն: Հարկավ, պատահական չէ, որ Հունաստանն անհողդողաբար պաշտպանում է Հայաստանի ու Եվրոպական Միության միջև կապերի հետագա զարգացմանն ուղղված (Եվրոպական) համայնքների բոլոր ծրագրերը: Հաստատ պատահական չէ նաև, 1999 թվականից սկսած և հետո նրանց մասնակցությունը *Սևծովյան Տնտեսական Համագործակցության Կազմակերպության* մեջ: Նրանց երկկողմ հարաբերություններն սկսեցին բազում ոլորտներում՝ տնտեսությունից և տեխնոլոգիայից սկսած մինչև հեռուստակապ, դրսևորել էական զարգացում: Հարկավ, ավելորդ է ընդգծել, որ այդ բարենպաստ զարգացման երկարակետությունը նախատեսում է, որ հունական արտաքին քաղաքականությունը, հիմք ունենալով հետզհետե ստեղծվող նոր պայմանները՝ իր հորիզոնները համարձակորեն ընդլայնի ամբողջ և առավել ընդարձակ միջավայրում: Համենայնդեպս, այդ ընդլայնման տարածքը, առավել ևս դրա իրականացման համար անհրաժեշտ պայմանները, անչափ խրթին հարցեր են, որոնք չեն վերաբերում առավել ևս պատմաբանին կամ գեթ սույն աշխատության հեղինակին:

ԾԱՆՈԹԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1. Υπόμνημα περί τῆς τῶν Ἀρμενίων μετὰ τῆς Ἀνατολικῆς Ὀρθοδόξου Ἐκκλησίας ασυμφωνίας, ποιηθέν μὲν ὑπὸ Εὐσεβοῦ τινος, τυπωθέν δέ ἤδη μετὰ προσθηκῶν καὶ σημειωμάτων, Κωνσταντινούπολη, Τυπ. Ἰ. Λαζαρίδης, 1850, 55 էջ:

2. Μανουήλ Ἰ. Γεδεών, *Μνεία τῶν πρό εμοῦ, 1800-1913*, Ὑρβάν, τυπ. Τά Χρονικά, 1934, էջ 276-279, ուր ասվում է, որ այդ շարժումից հետո հայագետ համարվեց միայն Դիմիտրիոս Յուլիդիսը, որի մասին տես սնորև, ծանոթ. 40:

3. Օրինակի համար տես 1866 թ. գրված Քրոսի մետրոպոլիտ (1860-1877 թթ.) Գրիգորիոս (Պավլիդիսի) *Περί Ἑνώσεως τῶν Ἀρμενίων μετὰ τῆς Ἀνατολικῆς Ὀρθοδόξου Ἐκκλησίας*, Κωνσταντινούπολη, Τυπ. Ἀντ. Κορομηλάς, 1871, էջ 153:

4. S. Th. Lascaris, *La politique extérieure de la Grèce avant et après le Congrès de Berlin (1875-1881)*, Փարիզ, Bossard, 1924, էջ 52-53:

5. Evangelos Kofos, *Greece and the Eastern Crisis, 1875-1878*, Սալոնիկ, Inst. for Balkan Studies, 1975, էջ 83 և հտ., 91-94:

6. Kofos, նշվ. աշխ., էջ 83 և հտ.:

7. Kofos, նշվ. աշխ., էջ 84, ծանոթ. 2: Հունական ռեակցիայի մասին տես B. H. Sumner, *Russia and the Balkans, 1870-1880*, Օքսֆորդ, Clarendon Press, 1937, էջ 244: Robert Arthur Talbot-ը Salisbury-ի 3-րդ մարքիզը (1830-1903 թթ.) այս ժամանակ Կոստանդնուպոլսի կոնֆերանսում Մ. Բրիտանիայի արտաքին գործոց նախարարը և իր երկրի ներկայացուցիչը Բեռլինի վեհաժողովում:

8. Kofos, նշվ. աշխ., էջ 92 և հտ.: Հմնտ. Անդր. Միչ. Անդրեάδης, «Օ լόρδος Σαλισβουրυ και το Ανατολικόν Ζήτημα», *Έργα*, տոմ. 3, Αθήνα, Πανεπιστήμιο Αθηνών, 1940, էջ 257-268 (1904 թ. հետազոտություն):

9. Christopher J. Walker, *Armenia. The Survival of a Nation*, Լոնդոն/Լյոն Յորք, St. Martin's Press, 1980, էջ 110-11: Հմնտ. Robert F. Zaidner, «Britain and the Launching of the Armenian Question», *International Journal of Middle East Studies*, 7 (1976), էջ 470-471 և ծանոթ. 17:

10. Արևմտյան աղբյուրների թվականները Գրիգորյան (նոր) օրացույցով են, իսկ «Արևելյանը»՝ Հուլիանոսյան (հին) կամ, ըստ ժամանակի սովորության, երկու համակարգով:

11. Paul Fesch, *Constantinople aux derniers jours d'Abdul-Hamid*, Փարիզ, M. Riviere, 1907, էջ 291-192: Հմմտ. A. O. Sarkissian, *History of the Armenian Question to 1885*, Urbana Ill., Univ. of Illinois Press, 1938, էջ 53, ծանոթ. 51, 58-59: Պոնտոսի հույն բնակչության տառապանքների և ռուսական հաղթանակների հանդեպ նրա ռեակցիայի մասին տե՛ս Դր. Ξανθοπούλου-Κυριακού, Η κρίση του Ανατολικού Ζητήματος του 1875-1878 και ο απόηχός της στον Πόντο, *Polyptychon. Homenaje a Ioannis Hassiotis*, Γρανάδα, Centro de Estudios Bizantinos, Neogriegos y Chipriotas, 2008, էջ 491-492, 494 և հտ.: Հայոց տարակուսանքների մասին հմմտ. Arthur Beylerian, Les origines de la Question Arménienne, du traité de San Stéfano au congrès de Berlin (1878), *Revue d'histoire diplomatique*, 87/1-2 (1973), էջ 152 և հտ.:

12. Տիեզերական պատրիարքարանի և Կոստանդնուպոլսի հունական դեսպանատան հետ Սարակիոտիսի համագործակցության և ցար ու ցրիվ զեկույցների մասին տես Kofos, նույն տեղում, էջ 78-87, 230:

13. Հմմտ. H. Pasdermadjian, *Histoire de l'Arménie, depuis les origines jusqu'au traité de Lausanne*, Փարիզ, Samuelian, 1949 (3η αναστατ. έκδ., Samuelian, 1971), էջ 346-348: Բոլոր դեպքերում Այսրկովկասի հայերի հանդեպ ռուսական քաղաքականությունը 1870-ականներին առավելապես թույլ էր, գոնե նրանց մտավոր գործունեության հանդեպ (խորության մեջ՝ քաղաքական), ինչպես երևում է այն փաստաթղթերից, որ հրատարակվել է George A. Bournoutian, *Russia and the Armenians of Transcaucasia, 1797-1889. A Documentary Record*, Costa Mesa, Կալիֆորնիա, Mazda Publs., 1998, էջ 407-409, 433 և հտ.):

14. Sarkissian, նշվ. աշխ., էջ 58-59:

15. Ժամանակաշրջանի ամենանշանավոր հայ զինվորականի՝ Միքայել Լորիս-Մելիքովի/Մելիքյանի (1826-1888 թթ.) այս պատերազմում ունեցած գործունեության մասին մասին տե՛ս W. E. D. Allen և Paul Muratoff, *Caucasian Battlefields: A History of the Wars on the Turco-Caucasian Border, 1828-1921*, Cambridge, Cambridge Univ. Press, 1953, էջ 111, 117 և հտ., 141 և հտ., 163 և հտ., 189 և հտ.:

16. Kofos, նշվ. աշխ., էջ 100 և հտ., 137 և հտ., 155 և հտ.:

17. Kofos, նշվ. աշխ., էջ 32, ծանոթ. 1, 86, 88 ծանոթ. 1, 233 ծանոթ. 2:

18. Kofos, նշվ. աշխ., էջ 103 և հտ., 142 և հտ.:

19. Ξανθοπούλου-Κυριακού, նշվ. աշխ., էջ 495 և հտ.:

20. Allen Muratoff, նշվ. աշխ., էջ 134 և հտ., 148 և հտ.:

21. Charles B. Norman, *Armenia and the Campaign of 1877*, Լոնդոն, Cassell, Petter, & Galpin, 1878, էջ 137, 234, 246 և հտ., 260 և հտ., 273, 294 և հտ.: Հմմտ. Walker, նշվ. աշխ., էջ 110:

22. Kofos, նշվ. աշխ., էջ 189-90:

23. Gabriel Noradounghian, *Recueil d'actes internationaux de l'empire ottoman*, հտ. 3, Փարիզ, F. Pichon, 1902, էջ 516-517: Հմմտ. Bourmoutian, նշվ. աշխ., էջ 443, թիվ 438, և Beylerian, էջ 157-159:

24. Sarkissian, նշվ. աշխ., էջ 76, Zeidner, նշվ. աշխ., էջ 473-474 և ծանոթ. 22-23, Pascual C. Ohanian, *La cuestión armenia y las relaciones internacionales*, t. I, Buenos Aires, Academia Nacional de Ciencias de la República de Armenia, էջ 223 և հտ. Richard G. Hovannisian, «The Armenian Question in the Ottoman Empire, 1876-1914», *The Armenian People from Ancient to Modern Times*, տպ. Richard Hovannisian, t. 2, New York, St. Martin's Press, 1997, p. 206-212. հմմտ. Arman J. Kirakossian, *British Diplomacy and the Armenian Question: From the 1830s to 1914*, Princeton NJ, The Gomidas Institute, 2003, էջ 73 և հտ. 84 և հտ. 114 և հտ.

25. Kofos, նշվ. աշխ., էջ 191 և հտ., և Beylerian, նշվ. աշխ., էջ 161 և հտ.:

